

ՀՈՒՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՑԱՂԱՅ ՔԱՐ ԿԱՆՔԸ





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

УСИК МЕЛКОНЯН

МОНАСТЫРЬ ЦАХАЦ КАР

ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HUSIK MELKONYAN

TSAGHATS KAR MONASTERY

HISTORICO-ARCHAEOLOGICAL RESEARCH

PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN 2024


ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՒՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՑԱՂԱՑ ՔԱՐ ՎԱՆՔԸ

ՊԱՏՄԱՐՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Պավել Ավերիսյան (գլխավոր խմբագիր), Լևոն Արրահամյան,
Ռուբեն Բաղալյան, Միհրան Գալստյան, Տորք Դալալյան, Ջուսուր Թրախնա, Թեո վան
Լինթ, Լորի Խաչատրյան, Թամար Հայրապետյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն
Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ,
Պարրիկ Տոնասպետյան, Պիլեր Բաուի

Խմբագիր՝ պ.գ.թ. Գագիկ Սարգսյան

ՅՏԴ 902(479.25):94(479.25)
ԳՄԴ 63.4(5Յ)+63.3(5Յ)
Մ537

Մեյքոնյան Հ.

Մ537 Ցաղաց քար վանքը (պատմահնագիտական ուսումնասիրություն) / Հ. Մեյքոնյան; խմբագրողներ՝ Գ.
Սարգսյանի. – Եր.: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024. – 184 էջ:

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացված են միջնադարյան նշանավոր հոգևոր և կրթամշակութային
կենտրոններից մեկի՝ Ցաղաց քար վանական համալիրի պատմությունն ու ճարտարապետական
հուշարձանները: Գրքում տեղ են գտել վանքի տարածքից պեղումներով հայտնաբերված վիմական
արձանագրությունները, կոթողային հուշարձաններն ու հնագիտական գտածոները:

ՅՏԴ 902(479.25):94(479.25)
ԳՄԴ 63.4(5Յ)+63.3(5Յ)

ISBN 978-9939-886-57-2

© Հ. Մեյքոնյան, 2024

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	7
Ցաղաց քար վանքի պատմությունը	8
Ցաղաց քար վանքի անվան ստուգաբանությունը	10
Վանքի ուսումնասիրության պատմությունը	11
Ճարտարապետական կառույցները	12
1987–1989 թթ. պեղումներով բացված հուշարձանները	14
Ճարտարապետական հուշարձանների քանդակները	17
Վիմական արձանագրությունները	22
Հուշակոթողները	57
Խաչքարերը	57
Տապանաքարերը	59
Ցաղաց քար վանքի նյութական մշակույթը	60
Ցաղաց քար վանքի տնտեսությունը և սեփական կալվածքները	63
Սկզբնաղբյուրներում վկայված Ցաղաց քարի վանահայրերի ցանկը	67
Վերջաբան	67
Монастырь Цахац Кар: историко-археологическое исследование	69
Tsaghats Kar Monastery: Historico-archaeological research	85
Աղյուսակներ	101
Գրականության ցանկ	176
Աղյուսակների ցանկ	179
Անձնանունների ցանկ	181
Տեղանունների ցանկ	182

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ցաղաց քար վանքը միջնադարյան Հայաստանի հոգևոր և կրթամշակութային խոշորագույն կենտրոններից է: Դարեր ի վեր, լինելով Սյունիքի մետրոպոլիտական աթոռի առաջնորդական միաբանություններից մեկը, այն հսկայական դեր է կատարել նրա հոգևոր կյանքում: Հուշարձանախումբը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Արտաբույնք գյուղից շուրջ 6 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից բարձրությունը 2100 մ է:

Հուշարձանախումբը բաղկացած է վեց եկեղեցուց, գավթից, երկու փոքր և մեկ ընդարձակ սյունասրահից, մի շարք խցերից: Համալիրն ունի ուղղանկյուն աշտարակներով ամուր պարսպապատ, որի ներսում, մոնումենտալ կառույցներից գատ, գտնվում են նաև տնտեսական կառույցներ: Վերջիններիս հյուսիսային եզրին վանքի ձիթհանն է՝ երկու աղացքարերով: Ձիթհանից հյուսիս-արևելք, ավերված շինություններից մեկում, հայտնաբերվել են երկու շարքով դրված մեծ կարասներ, որոնք վկայում են նաև հնձանի գոյության մասին: Այս կարասներից մեկն այժմ գտնվում է Արտաբույնք գյուղի բնակիչներից մեկի տանը: Վանքն ունի ընդարձակ գերեզմանատուն, որի IX–XIII դդ. հուշակոթողները պահպանվել են:

1986–1992 թթ. հնագիտական պեղումներ իրականացվեցին վանքի արևմտյան հուշարձանախմբում: Բացվեցին խմբի արևելյան կողմի ուղղանկյուն խորանով եկեղեցին, դարպասի վրայի երկհարկ եկեղեցին, Ս. Հովհաննես եկեղեցու գավիթն ու հարավային սյունասրահը և

Ս. Աստվածածնի արևմտյան ու հարավային սյունասրահները: Հատկապես ուշագրավ է դարպասի վրայի եկեղեցին, որի նմանը կա նաև Վահանավանքում և Տաթևում:

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են մեծ թվով խաչքարեր: Ի հայտ են եկել 81 վիմագրեր, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվել առաջին անգամ: 2010-ական թվականներին վանքի Ս. Կարապետ և Ս. Նշան եկեղեցիների վերականգնման ժամանակ հայտնաբերվել են ևս մի քանի արձանագրություններ, որոնցով լրացվել է նորահայտ վիմագրերի հավաքածուն: Վանքի վիմագրերի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ համալիրը հիմնադրվել է IX դ. և գործել մինչև XVII դ.: Հայտնաբերվել են նաև հնագիտական նյութեր, որոնցից ուշագրավ է պղնձե ձեռաց խաչերի հավաքածուն:

Գրքում տեղ են գտել Ն. Պապուխյանի, Ա. Հարությունյանի, Գ. Տոնոյանի, Վ. Հովակիմյանի, Ս. Մարգարյանի և Գ. Վաղարշակյանի չափագրություններն ու Լ. Ավագյանի, Ա. Ալեքսանյանի, Գ. Համբարձումյանի և Ս. Աղայանի գծանկարները: Լուսանկարները հիմնականում հեղինակինն են, օգտագործվել են նաև Դ. Երմակովի ֆոնդի և Ա. Բարաշանյանի լուսանկարները: Գրչագրերի մի մասը վերցված է «Դիվան հայ վիմագրության» երրորդ՝ Վայոց ձորին նվիրված պրակից:

Գիրքն ունի ռուսերեն և անգլերեն ամփոփումներ (թարգմանությունները՝ Հ. Մարգարյանի և Ի. Հովսեփյանի):

ՑԱՂԱՑ ՔԱՐ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մենաստանի մասին հնագույն հիշատակությունը վերաբերում է Մդ. և ամնչվում է պարսկական նվաճողների դեմ մղած ազատագրական պայքարին: 451թ. Ավարայրի ճակատամարտից հետո հայկական զորաջոկատները նահանջում են երկրի անմատչելի՝ համեմատաբար ապահով վայրերը. «...սակայն ցանեալ ցրուեցան, և հասեալ անկանէին ի տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բագում գաւառաց եւ բերդից, զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր»¹:

Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը վկայում է. «Սուրն վաղակաւոր կայր մերկացեալ ի վերայ ամենայն հայ զինուորի, և միայն խնդրէին բանի միով ուրանալ գՔրիստոս. և գլուխ կորացուցանել արեգական. և թէ ոչ՝ մեռանել առ ժամայն»²: Ըստ պատմիչի՝ յուրաքանչյուր հայ զորական կանգնած էր ընտրության առջև՝ լինել հավատալի կամ ընկնել սուրը ձեռքին՝ հանուն հավատի: Ավարայրից հետո դեպի Արցախ նահանջող զորաջոկատներից մեկը չորս ճակատամարտ է տալիս հետապնդող Աթաշխուդա զորավարի զորքի դեմ, որոնցից մեկը՝ «Եւ անտի սակաւ մի անցեալ Պարսկացն ի ձորադուռն որ ի ձախ կողմանէ որ հայի ի վեր յովստն սուրբ Յաղացքար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մեջ սահմանացն երկուց գեղջն...»³: Յաղաց քար վանքի դիմաց՝ ձորաբերանի մոտ են գտնվում Արտաբույնք ու Ոստինք գյուղերը՝ ներկայիս Շատինը: Վանքի անվան հիշատակությունը Մդ. դեպքերի հետ կապված անհավանական է թվում: Կարծում ենք, որ Օրբելյանն այս տեղադրությունը բերում է իր ժամանակի վանքի հետ կապված:

Երբ Աշոտ Ա Բագրատունին համատ ու երկարատև պայքարից հետո թագավոր դառնալով վերականգնում է հայոց պետականությունը, նրան ակտիվորեն աջակցում է նաև Սյունիքի Վասակ գահերեց իշխանը⁴: Աշոտի և նրա հաջորդի՝ Սմբատի օրոք ամբողջ երկիրը, այդ թվում նաև Սյունիքը լծվում է խաղաղ, ստեղծարար աշխատանքի. «...և այն ինչ ժամանակս յովով խաղաղութին բերէր ընդ բոլոր Հայաստանեայս. սակս որոյ ամենեքեան շինութեան եկեղեցեաց պարապէին. ևս առաւել որդիքն Վասակայ՝ Սինեաց տեառն, և Գրիգորի Սուփանայ՝ Սահակ և Վասակ, և մայրն իրեանց Մարիամ ի գաւառեն Գեղաքունոյ. զի այն իսկ գաւառ շուրջ զծովակովն նոցա էր հասեալ ի բաժին ժառանգութեան: Իսկ բուն գահ իշխանացն Սինեաց էր Բաղք, Վայոց ձոր և այլ շրջակայքն՝ Վասակայ և Աշոտոյ և որդուց Աշոտոյ՝ Սմբատայ, Սահակայ և Բարգենի և Վասակայ, և որդւոյն Վասակայ Փիլիպպէի»⁵:

Յաղաց քարը հիշատակվում է Մդ.՝ Աբաս Բագրատունի թագավորի տիրապետության շրջանում (929/30–953թթ.): Ըստ Ստեփանոս Տարոնացու վկայության՝ հայր Ստեփանոսի վանահայրության տարիներին Յաղաց քարը ծաղկուն և հռչակավոր վանք էր: Պատմիչը, հիշատակելով հայոց աշխարհում պետականության վերականգնումով թափ առած բուռն շինարարական վերելքի մասին, թվարկում է մի շարք նշանավոր վանքեր, ի թիվս որոնց՝ Վայոց ձոր գավառից. «...և Յախաց քար ի Վայոց Ձորի ի ձեռն հոր Ստեփանոսի»⁶: Ենթադրում ենք, որ այս Ստեփանոս վանահորն է պատկանում վանքի

¹ Եղիշեի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ՝ Ե. Տեր-Մինասեանի, Երևան, 1957, էջ 119:

² Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ՝ Ստ. Օրբելյան արքեպիսկոպոսի Սինեաց, Թիֆլիս, 1910, էջ 68–69:

³ Նշվ. աշխ., էջ 70:

⁴ Նշվ. աշխ., էջ 175:

⁵ Նշվ. աշխ., էջ 176–177:

⁶ Ստեփանոսի Տարոնացոյ Ասողական Պատմութիւն տիեզերական, հր.՝ Ստ. Մալխասեանցի, Պետերբուրգ, 1885, էջ 176:

Ս. Կարապետ եկեղեցուց հարավ-արևմուտք բացված հուշակոթողը, որի հիշատակագիրը հաղորդում է. «Թ՝ ՆԼԵ: ՀԱՅԲ ՍՏԵՓԱՆՈՍ»⁷: Համաձայն նորահայտ հիշատակագրի հաղորդման, այս հայր Ստեփանոսը մահացել է 986 թ., որը հենուի չէ Աբաս Բագրատունու տիրապետության շրջանից, ինչը ևս փաստում է երկու Ստեփանոսներին նույնացնելու իրողության հավանականությունը, նամանավանդ, եթե հաշվի առնենք Ստեփանոս Օրբելյանի այն վկայությունը, որ Ցաղաց քարի արևելյան հուշարձանախմբի գույգ եկեղեցիները կառուցվել են «...ի հանգստարանի առաջին սուրբ հարցն»⁸: Սրանից, թերևս, հետևում է, որ Ստեփանոս վանահայրը ևս թաղված էր առաջին սուրբ հայրերի գերեզմանատանը:

Վանքի տարածքում պահպանված մոնումենտալ կառույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հուշարձանախմբի հնագույն շինությունները արևմտյան համալիրում պահպանված չորս եկեղեցիներից երկուսն են՝ Ս. Աստվածածինը և Ս. Հովհաննեսը: Հայկական ճարտարապետության պատմության տեսաբան Ս. Մնացականյանն, ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով Ցաղաց քարի վերոհիշյալ հուշարձանները և դրանք համեմատելով Սյունիքի ճարտարապետության համաժամանակյա ու համանման կառույցների հետ, կարծում է, որ թեև Ս. Աստվածածինը իր արժանավույն տեղն է գրավում հուշարձանախմբի հոգևոր կառույցների շարքում, սակայն, իր հատակագծային հորինվածքում ներմուծած մի քանի «անհաջող» տարրերի պատճառով, «...այդպես էլ մնաց որպես միակ հայտնի օրինակը և չունեցավ իր հետագա զարգացումը»⁹: Ուսումնասիրողը նկատի է ունեցել եկեղեցու ավանդատները և դրանք միացնող միջանցքները: Ուշագրավ է Ս. Հովհաննեսը, որն առանձնատում է հարավային հատվածի գույգ ավանդատներով և նրանց միջև գտնվող փոքրիկ սրահով: Ս. Մնացականյանը, խոսելով Սյունիքի թաղածածկ հորինվածքներում (Ցաղաց քար, Արա-

տես, Որոտնավանք) ավանդատներ գետեղելու մասին, գրում է. «Խիստ ուշագրավ է նրա (իմա՝ Ս. Հովհաննեսի) հատակագծային հորինվածքը. սովորական թաղածածկ դահլիճի հարավային կողմում տեղավորված են երկու արևմուտքից արևելք ձգվող ավանդատներ, ընդ որում նրանց միջև ստացվող ոչ լայն տարածության դիմաց էլ տեղավորված է եկեղեցու հարավային մուտքը: Եկեղեցու մյուս մուտքը տեղավորված է նրա արևմտյան ճակատում»¹⁰: Ինչպես ցույց տվեցին հետագա ուսումնասիրությունները՝ այս կառույցը հարավային մուտք չունի:

Ցաղաց քարի արևմտյան համալիրի երկու եկեղեցիների, XI դ. դրանց հարավային կողմերից կցակառուցված պուրատարների, ինչպես նաև Ս. Աստվածածնի արևմտյան կողմի շինությունների ընդարձակ համալիրը¹¹ ցույց է տալիս, որ IX–XI դդ. վանքի բոլոր ծաղկման ժամանակաշրջաններից մեկն են: Նամանավանդ, եթե նկատի ունենանք, որ այս շրջանում են կառուցվել նաև արևելյան հուշարձանախմբի եկեղեցիները:

Վանքի մասին մատենագրական հաջորդ վկայությունը վերաբերում է XI դ. կեսերին կատարված շինարարական աշխատանքներին: Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, թվարկելով նահանգի երեսուն կարևորագույն հոգևոր կենտրոնները, Վայոց ձոր գավառի յոթ մեծ վանքերի շարքում հիշատակում է. «...Ցաղաց քար՝ բարձրահռչակ և սուրբ առաքինարան յորում ի 490 թուականին ի թագաւորութեանն Գագկայ, հայր ոմն վանիցն Վարդիկ անուն շինէ պայծառ եկեղեցիս երկու...»¹²: Ըստ այս վկայության՝ 1041 թ. այստեղ շինարարություն է իրականացվել հայր Վարդիկ վանահոր գլխավորությամբ¹³: Հայր Վարդիկի կողմից վերոհիշյալ գույգ եկեղեցիները կառուցելու մասին են փաստում նաև հետևյալ երկու արձանագրությունները: Ս. Կարապետի մուտքի բարավորի շինարարական վկայագիրը հաղորդում է. «...ԵՍ ՎԱՐ-

⁷ Զ. Մելքոնեան, Նորայայտ արձանագրություններ Ցաղաց քար վանքից, «Հանդես ամսօրեայ», 1996, էջ 81:

⁸ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 340:

⁹ Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 79–82:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 138:

¹¹ Ցաղաց քարի արևմտյան հուշարձանախմբում առկա են ևս մի քանի կառույցներ, որոնք հետագա դարերի են:

¹² Ստ. Օրբելյան, էջ 340:

¹³ Նույն տեղում:

ԴԻԿ ՀԱՅՐ ՍՏԱՑԱՅ ԶՍԲ ԿԱՐԱՊԵՏՍ...»¹⁴: Ս.Նշան (Ս.Հովհաննես) եկեղեցու արևմտյան պատին փորագրված արձանագրությունը ևս վկայում է. «ԵՍ ՀԱՅՐ ՎԱՐԴԻԿ ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒՆՏԻՍ ՑԱՂԱՑ ՔԱՐԻ ՇԻՆԵՑԻ ԶՍԲ ԿԱԹԱՂԻԿԷՍ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՆՇԱՆ ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ...»¹⁵: Արձանագրությունների վերաբերյալ հատվածները փաստում են Վարդիկի վանահայրությանը հիշյալ եկեղեցիների շինարարության մասին:

Ցաղաց քար վանական հուշարձանախմբի կառույցների որմերին փորագրված են XI–XIV դդ. բազմաթիվ վիմական արձանագրություններ, որոնք հավաստում են նշված ժամանակաշրջանում վանքի ծաղկման մասին¹⁶:

Նույն եկեղեցու հարավային մուտքի շրջանակի քիվին փորագրված արձանագրությունը հաղորդում է. «ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ՈՂՈՐՄԵԱՅ ԳԱԳԿԱՅ Ի ՔՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆԴ ԵՒ ՊԱՀԵԱ Ի ՉԱՐԷ»¹⁷:

1331թ. Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս-Տարսայիճի պատվերով Դրագարկում Թորոս փիլիսոփայի ստեղծած Աստվածաշնչից ընդօրինակված համանուն ձեռագրի հիշատակարանում գրիչն անդրադառնում է պատվիրատուի անձին

ու նրա պաշտոնավարության սահմաններին. «...տեառն Ստեփաննոսի՝ հզար և իմաստուն գիտնականի, վարժեալ ի վարժարանի վարժապետին Եսայեայ տրեզերաքարոզ լուսատրչին, որդի իշխանաց իշխանին՝ քաջ սպառազէն մեհամարտիկ զինատրի Ջալալին, թոռն մեծ աթաբակին Հայոց և Վրաց վեհ Տարսայիճին, **տէր և վերատեսուչ գահերէց և գլուխ արհիերէց աթոռոյս Սիւնեաց Տաթևոյ և Նորավանից և Ցախացքարոյ**, պետ երկոտասան գաւառաց, ուրախ եղև իբրև ընծայ ի վերուստ առաքեալ...»¹⁸: Փաստորեն, ըստ հիշատակարանի, XIV դ. Ցաղաց քար վանքը, ինչպես նաև Սյունյաց հոգևոր թեմի առաջնորդների երկու մետրոպոլիտական նստավայրերը՝ Տաթևը և Նորավանքը, համարվում էին թեմի ավագագույն՝ **արհիերէց** աթոռները: Վերջին գրավոր հիշատակությունները Ցաղաց քար վանքի մասին վերաբերում են XV դ.¹⁹: Համաձայն այդ վկայությունների՝ վանքը համարվել է խոշոր գրչության կենտրոն: Այդ մասին են վկայում նաև վանքում պահպանված վիմական արձանագրությունները, համաձայն որոնց՝ այստեղ են թաղված ձեռագրերում հիշատակված անձինք (այդ մասին մանրամասն տես վանքի վիմագրերին նվիրված գլխում):

ՑԱՂԱՑ ԶԱՐ ՎԱՆՔԻ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան Հայաստանի վանքերի անվանումներն ու անվանակոչությունը, ինչպես նաև դրանց ստուգաբանությունը բավականին բարդ խնդիրներ են: Հաճախ դրանց վերծանությունը խիստ դժուր է, քանի որ մեծ մասամբ կապված է լինում մերձակա բնակավայրերի, սրբերի կամ աստվածաշնչյան անունների հետ: Կան վանքեր, որոնց անվանումները չեն ստուգաբանվում: Այդ շարքին է դասվում նաև Ցաղաց

քարը: Սկզբնաղբյուրներում այն հանդիպում է տասնյոթ անգամ, որոնցից ինը՝ վիմագրերում, հինգը՝ ձեռագրաց հիշատակարաններում և երեքը՝ պատմագիրների մոտ: Իննում այն անվանված է **Ցաղաց քար**, երեքում՝ **Ցաղացքար**, երկուսում՝ **Ցախաց քար**, մեկում՝ **Ցաղան քար**, մյուսում՝ **Ցաղած քար** և վերջինում՝ **Ցողաց քար**: Սրանց մեջ գերադասելին, անշուշտ, Ցաղաց քար՝ ավելի հաճախ հանդիպող տարբերակն է:

¹⁴ Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 146:
¹⁵ Նշվ. աշխ., էջ 151:
¹⁶ Նշվ. աշխ., էջ 142–153:
¹⁷ Նշվ. աշխ., էջ 142–153:
¹⁸ ԺԴ հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 231:
¹⁹ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, մասն Ա, Երևան, 1955, էջ 473, մասն Բ, Երևան, 1958, էջ 195–196, մասն Գ, Երևան, 1967, էջ 40–45, 186:

Վանքի անվանումն, ըստ էության, հարադիր բարդություն է, որը կազմված է «ցախ» (ցախաց – ցախերի) և «քար» բառերից: Ենթադրում ենք, որ վանքի անվանակոչության համար հիմք կարող էր դառնալ վերը նշված երկու բառերի հարադրությունը: Եթե նկատի ունենանք վանքի բարձրահայաց դիրքը և այն հանգամանքը, որ Ցաղաց քարը միջնադարում համարվում էր հրեշտակների բնակության վայր, որոնք, ըստ հավատամքի, ապրում (սավառնում) էին երկնքում՝ բարձրում, վերևում, ապա վանքի անվան ծագումը կարող է բացատրվել նրա վերահայաց դիրքով:

Մերձակա Արտաբույնք և Հորբատեղ գնացող ճանապարհից վանքի սարահարթ նայող դի-

մահայաց հատվածում առկա է մի քանի հարյուր մետր բարձրություն ունեցող ուղղահայաց ժայռերի զանգված, որն իջնում է մինչև ձորը: «Ցախ» և «քար» բառերը բազմաթիվ տարբերակներով վկայված են հայոց բառարաններում (փայտ²⁰, անտառ²¹, մացառ²², ձող, նաև՝ ցախ մորուք²³ – քարոտ, ժայռոտ, պնդոտ, ուժեղ և այլն)²⁴:

Թերևս կարելի է ենթադրել, որ վանքը կարող էր անվանակոչվել իր դիրքի, ժայռերի զանգվածի վրա՝ տափարակին գտնվելու պատճառով (տե՛ս փայտ-ցախ, ցախանման քար-ժայռ, այն է՝ ստալակտիդ): Այս տարածքը կարելի է անվանել անտառապատ կամ մացառապատ ժայռոտ տարածք:

ՎԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանի ուսումնասիրությունն սկսվել է դեռևս XIX դ. կեսերից, երբ երևան եկան Հայաստանի տարբեր գավառներին նվիրված տեղագրական ուսումնասիրություններ: Տեղագրական բնույթի այս աշխատություններում, ի թիվս Վայոց ձորի այլ հուշարձանների, նկարագրվում են նաև Ցաղաց քար հուշարձանախումբը և նրա կառույցների որմերին պահպանված վիմական արձանագրությունները: Այս աշխատությունները, չնայած անճշտություններին ու այլ թերություններին, խիստ կարևոր են, հաճախ ունեն սկզբնաղբյուրի

արժեք, քանզի ժամանակին հրատարակված վիմագրերի մի մասն այսօր չի պահպանվել:

Այս առումով կարևոր են Ս. Զալալյանցի²⁵, Դ. Բաքրաձեի²⁶, Քաջբերունու²⁷, Ղ. Ալիշանի²⁸, Ե. Լալայանի²⁹, Ք. Հովհաննիսյանի³⁰ տեղեկությունները:

Ցաղաց քար վանքի մասին բազմաթիվ դիտարկումներ կան հայ արվեստի խոշորագույն գիտակ Գարեգին Հովսեփյանի՝ Պոռոջան նշանավոր իշխանական տան պատմությանը նվիրված աշխատության էջերում³¹:

²⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, կազմ.՝ Գ. Անտիբեան, Խ. Սիրմելեան, Մ. Աղեբեան, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 951:

²¹ Նշվ. աշխ., հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 243: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1971, էջ 219:

²² Նշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1977, էջ 290:

²³ Նշվ. աշխ., հ. Դ, Երևան, 1979, էջ 446–447:

²⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 984–995: Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Դ, Երևան, 1979, էջ 558–560:

²⁵ Ս. Զալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1853, էջ 15–163: Ս. Զալալյանցը իր աշխատության Վայոց ձորի հուշարձաններին նվիրված հատվածները շարադրելիս օգտագործել է անցած հարյուրամյակի 40–50-ական թվականների Շարտր Դարալագյազի գավառապետ, շամխրեցի կապիտան Պետրոս Մաղաթյանի որդեգիր Հովհաննես Բարայանի և տեղական քահանաներ Ավագ Արքահայանի ու Առաքել Աստվածատրյանի 36 էջից կազմված գրառումները: Անձամբ չլինելով տեղում՝ Զալալյանցը, բնականաբար, թույլ է տվել բազում անճշտություններ՝ հաճախ շփոթելով տարբեր հուշարձաններ ու բնակատեղիներ: Ավելի ուշ նույն սխալն է թույլ տվել նաև Բաքրաձեն, որի համար հիմնական սկզբնաղբյուր է համարվել Ս. Զալալյանցի աշխատությունը:

²⁶ Д. Баградзе, Кавказ в древних памятниках христианства, Акты, собранные Кавказской археографической комиссией, том V, Тифлис, 1873, стр. 931–1107. Том VI, часть II, Тифлис, 1875, стр. 885–905.

²⁷ Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողությունք, «Արարատ», Վաղարշապատ, 1888, Երևան, էջ 304–305:

²⁸ Ղևոնդ Ալիշան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 152–157:

²⁹ Եր. Լալայան, Վայոց ձոր կամ Դարալագեազ, «Ազգագրական հանդես», գիրք XVI, Թիֆլիս, 1917, էջ 17–26: Նույնի՝ Даралагязский участок Шаруро-Даралагязского уезда Ереванской губ. Фотоальбом видов местности и исторических памятников, Тифлис, БГ, стр. 105–115:

³⁰ Материалы по археологии Кавказа, вып. XII, Москва, 1916, стр. 105–115:

³¹ Գ. Հովսեփյան, Խաղարկյանք կամ Պոռոջանք հայոց պատմության մեջ, հ. 1, Վաղարշապատ, 1928, էջ 38, 69, 122, 163, 173, 178, 179, 187, հ. 3, Նյու-Յորք, 1942/3, էջ 4:

Ավելի ուշ վանքի հուշարձանների ուսումնասիրությունն իրականացրել է Հ.Եղիազարյանը, որը հրատարակել է նաև մենաստանի վիմական արձանագրությունները³²: Ցաղաց քար վանքը քանիցս հիշատակվում է վիմագրագետ Գր. Գրիգորյանի՝ Սյունիքի վանական կալվածատիրությանը նվիրված աշխատության մեջ: Հեղինակը միջնադարյան Հայաստանի վանքերի սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուսաբանման համար օգտագործել է վանքի վերաբերյալ առկա վիմագրական և մատենագրական մի շարք վկայություններ³³:

Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցին նվիրված Ս.Մնացականյանի աշխատության մեջ, բացի Ցաղաց քարի հուշարձանների մանրամասն նկարագրությունից, դրանք նաև գնահատվել են հայ միջնադարյան ճարտարապետության հենքի վրա³⁴: Վանքի վիմական արձանագրությունների գիտական հրատարակությունն իրականացրել է Ս.Բարխուդարյանը: Նրա կազմած «Դիվան հայ վիմագրության» երրորդ

պրակում, որը նվիրված է Վայոց ձորի արձանագրություններին, Ցաղաց քար վանքից գետնված են 34 վիմագրեր, որոնց զգալի մասը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում վանքի գործունեության տարբեր ոլորտների ուսումնասիրության տեսանկյունից³⁵:

Հայկական միջնադարյան կոթողային հուշարձաններին նվիրված մի շարք աշխատություններում ուսումնասիրվել են նաև Ցաղաց քարի հուշակոթողները³⁶: Վերջին տարիներին վանքին և նրա առանձին հուշարձաններին են անդրադարձել մի շարք ուսումնասիրողներ³⁷:

1987 թ. վանքում սկսվել են հնագիտական պեղումներ, որոնք կանոնավոր կերպով շարունակվել են նաև հետագա տարիներին՝ մինչև 1993 թ.: Պեղումներով ի հայտ են եկել նորանոր հուշարձաններ (սյունասարահներ, եկեղեցիներ, գավիթ և այլն), բազմաթիվ հուշակոթողներ (խաչքարեր, տապանաքարեր), հնագիտական այլ նյութեր, որոնց ուսումնասիրությունը լույս է սփռում վանքի պատմության բազմաթիվ մութ հարցերի վրա:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ (Ցաղաց քարի հուշարձանները)

Ցաղաց քար վանքը բաղկացած է երկու հուշարձանախմբից³⁸: Վանքի արևելյան խմբում երկու եկեղեցիներ են, որոնք 1041 թ. կառուցել է հայր Վարդիկը: Ստ.Օրբելյանը գրում է. «...շինե (հայր Վարդիկը – Հ.Մ.) պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն. զմին գմբեթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմի-

տուն սագաշէն, հրաշալի յօրինուածովք»³⁹: Հուշարձանախմբի Ս.Կարապետ եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ կառույց է: Շարված է բազալտի զանգվածեղ սրբատաշ քարերով և հարդարված բուսական ու երկրաչափական բազմապիսի զարդաքանդակներով: Կառույցին

³² Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 53–66, Ցաղացքար վանք կամ Ղուշավանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1970, Գ, էջ 44:

³³ Գ. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Երևան, 1973: Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XV դարեր), Երևան, 1981: Գ. Գրիգորյան, Վահանավանք. պատմահնագիտական ուսումնասիրություն, Երևան, 2007:

³⁴ Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 123–132, 182–185, 210–222:

³⁵ Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 140–154:

³⁶ Լ. Ազարյան, Հայկական խաչքարեր, Փարիզ, 1973: Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, IX–XIII դարերի խաչքարերը, Երևան, 1984: Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008:

³⁷ Գ. Սարգսյան, Ա. Խաչատրյան, Վայոց ձոր, Երևան, 1980: Ա. Մկրտչյան, Էջեր Սյունյաց աթոռի պատմությունից, Ս. Էջմիածին, 1995: Ա. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում, Երևան, 1913: Հ. Կարապետյան, Վայոց ձորն ու նրա հուշարձանները, Երևան, 2012:

³⁸ Հուշարձանի չափագրություններն իրականացրել է ճարտարապետ Մ. Մանուկյանը:

³⁹ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 340: Ակներևաբար այս նույն հայր Վարդիկն է հիշատակված Արատեսի վանքի գմբեթավոր եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան մուտքի ճակատի 1073 թ. արձանագրության մեջ: Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 122:

առանձին շուք են հաղորդել հերալդիկ և կտիտորական քանդակները, որոնցից տեղում մնացել է միայն հյուսիսային որմին ագուցվածը՝ առյուծի և ցլի մենամարտի տեսարանով: Բարձր ճաշակով են հարդարված հատկապես կառույցի պատուհանները և խաղողի ու նոսն քանդակներով ռճավորված զարդամոտիվներով հարավային միակ մուտքի բարավորը: Ուշադրության է արժանի այն պարագան, որ Ս.Կարապետի շքամուտքի և պատուհանների շուրջն արված քանդակագարդ գոտիների զարդաձևերը գրեթե նույնությամբ հանդիպում են Ս.Նշանի և շրջակա մի շարք խաչքարերի վրա: Սա ոչ միայն հավաստում է Ցաղաց քարում քանդակագործական ուրույն դպրոցի առկայության մասին, այլև հաստատում պատմիչի՝ դրանց համաժամանակյա լինելու վկայությունը: Ճարտարապետական հորինվածքով և գեղարվեստական հարդարանքով եկեղեցին ուրույն տեղ է զբաղեցնում Սյունիքի նույնատիպ ու համաժամանակյա կառույցների շարքում և կրում է Այրարատի ու Շիրակի ճարտարապետական դպրոցների ազդեցությունը⁴⁰:

Ս.Կարապետի պատուհանների պսակների քանդակները նույնությամբ հանդիպում են նաև Արատեսի վանքի Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վերին մասում գտնվող գոտու վրա, ինչը հիմք է տալիս պնդելու, որ այս երկու կառույցների քանդակագործը նույն մարդն է: Երկու եկեղեցիների կառուցողին նույնացնելու փաստը հիմնավորելուն նպաստում է այն, որ Արատեսի վանքի գմբեթավոր եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան մուտքի ճակատի արձանագրության՝ Ս.Բարխուդարյանի վերձանության համաձայն, գմբեթավոր եկեղեցին ժամանակակից է 1073 թ. Ցաղաց քարի Ս.Նշանի և Ս.Կարապետի հիմնարկեքի ժամանակվան՝ 1041 թ.: Ինդրո առարկա արձանագրության մեջ ևս հիշատակվում է հայր Վարդիկը, որի անվանը Ցաղաց քարում վերջին անգամ հանդիպում ենք 1051 թ.:

Հուշարձանախմբի հաջորդ կառույցը Ս.Նշան երկհարկ դամբարան եկեղեցին է, որը գտնվում է Ս.Կարապետի հյուսիսարևելյան կողմում: Շինության առաջին հարկում գտնվող ներքուստ

ուղղանկյուն-քառանկյուն հատակագծով և պատան արսիդով եկեղեցին արևմտյան մասում գավիթ ունի, իսկ երկրորդ հարկում, գավթի վրա, կառուցված է փոքրիկ մատուռ-աղոթարան: Հետաքրքիր լուծում ունի կառույցի արևմտյան ճակատը, որի զարդն են կազմում 3,25 և 2,00 մ երկարությամբ գեղաքանդակ խաչքարերը (չափերի մեջ չեն մտնում կոթողների քիվերի երկարությունը, քանի որ դրանք հայտնաբերվել են կառույցի վերականգնման հետ կապված՝ Ս.Նշանի մաքրման աշխատանքների ժամանակ): Դրանցից ներքև, կամարաձև խորշի երկու կողմերում, եղել են մեկական գնդաձև պատվանդաններ (մեկն ընկել է), որոնք նույնպես ավարտվել են հուշակոթողներով: Ս.Նշան երկհարկ դամբարան եկեղեցին Սյունիքում այս տիպի մեզ հայտնի հնագույն օրինակն է⁴¹: Ավելի ուշ նման կառույցներ են ստեղծվել Վահանավանքում, Տաթևում և գեղարվեստական մշակման լավագույն օրինակներ դարձել Անիում (Հովվի եկեղեցի), Եղվարդում, Ամաղուի Նորավանքում և Կապուտանում:

Ցաղաց քար վանքի հուշարձանների վերոհիշյալ արևելյան խմբի շրջակայքում փոխված X-XVII դդ. տապանատունը գտնվում է հուշարձանից հարավ և զբաղեցնում է ավելի քան 2600 մ² տարածք:

Վանքի հուշարձանների երկրորդ խումբն առաջինից հեռու է շուրջ 100 մ և զբաղեցնում է բավականին ընդարձակ տարածություն: Արևմտյան հուշարձանախմբի գլխավոր կառույցներից է Ս.Աստվածածին եկեղեցին, որը գտնվում է մոնումենտալ հուշարձանների հյուսիսային մասում:

Այն արտաքուստ ուղղանկյուն-քառանկյուն, ներքուստ՝ խաչաձև հատակագծով, գմբեթավոր, չորս մույթերով կառույց է: Շարված է բազալտի կոպտատաշ և ճեղքված քարերով ու կրաշաղախով: Հետաքրքիր է հուշարձանի չորս ավանդատների մուտքերի դասավորությունը, որը եզակի է Հայաստանի միջնադարյան ճարտարապետության մեջ: Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից: Ծածկի մի մասը և գմբեթը փլված

⁴⁰ Ս.Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 123–132: Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 219–221:

⁴¹ Հայաստանում երկհարկ դամբարանային կառույցների ակունքները հասնում են վաղ միջնադար (Աղցք, Զովունի, Կարանիս և այլն): Տե՛ս Ս.Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982:

են: Ճարտարապետական հորինվածքով Ս.Աստվածածին եկեղեցին նման է Սյունիքի IX–X դդ. նույնատիպ կառույցներին և թերևս վերաբերում է վերը հիշատակված Ստեփանոս վանահոր ժամանակներին:

Եկեղեցուն կից, նրա հարավային կողմում, ակներևաբար XI դ., կառուցվել է սյունասրահ, որը հյուսիսային սյունաշարով հենված է Ս.Աստվածածին եկեղեցու հարավային որմին: Սրահի արևելյան մասում ոչ մեծ ուղղանկյուն սենյակ է, որի արևմտյան որմին պահպանված արձանագրությունը հավաստում է, որ 1222 թ. Ս.Աստվածածին եկեղեցին վերանորոգվել է ուն Գրիգորի կողմից⁴²: Վերոհիշյալ սյունասրահի հարավային մասում է գտնվում միջանցք-դարպասը, որը կառուցված է սրահի և վանքի Ս.Հովհաննես եկեղեցու միջև: Այն բազալտի սրբատաշ քարերով է, վերին մասում պսակված է սլաքաձև կամարով: Որմերին պահպանվել են XIII–XIV դդ. վիմագիր արձանագրություններ⁴³:

Հուշարձանախմբի հաջորդ եկեղեցին Ս.Հովհաննես անունով միանավ թաղակապ սրահն է, որը շարված է կոպտատաշ բազալտի քարերով և կրաշաղախով: Հարավային մասում ունի երկու

ավանդատներ, որոնց միջև թաղակապ ծածկով խորանն է: Արևելյան ավանդատան մուտքը բացվում է ավագ խորանի, իսկ արևմտյանինը՝ եկեղեցու միջև: Եկեղեցու արևելյան որմին փորագրված է թվական՝ ՆԼԸ (989)⁴⁴: Եթե այս թվականն ընդունենք որպես շինարարության ավարտի վկայություն, ապա պարզ կդառնա, որ հուշարձանի կառուցումն ավարտվել է 989 թ.: Եկեղեցու միակ՝ արևմտյան մուտքի բարավորին փորագրված է 1211 թ. նվիրատվական արձանագրություն⁴⁵: Ցաղաց քար վանքի արևմտյան հուշարձանախմբի վերոհիշյալ կառույցների շուրջը պահպանվել են այլ մոնումենտալ շինությունների ավերակներ, որոնք նախքան պեղումները գրեթե ամբողջությամբ ծածկված էին հողի հաստ շերտով: Գլխավոր հուշարձանախմբի շուրջը տարածվում է մի քանի հեկտար մակերեսով միջնադարյան ընդարձակ բնակատեղի, որի հարավային եզրին պահպանվել են ուղղանկյուն-քառանկյուն աշտարակներով պարսպապատերի որոշ հատվածներ՝ շարված բազալտի ճեղքված քարերով և հողի շաղախով: Արևելյան մասում գերեզմանոցն է:

1987–1989 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐՈՎ ԲԱՑՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ԴՆԵՊՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և հուշարձանների պահպանության հայկական ընկերության միջոցներով 1987 թ. աշնանը սկսվեցին Ցաղաց քար հնավայրի հնագիտական պեղումները, որոնք կենտրոնացվեցին վանքի արևմտյան հուշարձանախմբում:

1987 թ. Ս.Հովհաննես եկեղեցուց հարավ բացվեց նրա որմին կից կառուցված սյունասրահը (երկարությունը՝ 12 մ, լայնությունը՝ 5 մ)⁴⁶: Կառույ-

ցը շարված է բազալտի սրբատաշ քարերով և կրաշաղախով: Որմերի պահպանված բաճրությունը 3,5 մ է: Արևելյան մասում, սրահի ընդհանուր մակերեսի մեջ, կա ներգծված փոքր փակ կառույց: Փակ է նաև դրան հարող հարավային սյունաշարի արևելյան անկյունը: Կամարների միջև սրահի լայնքով հետագայում դրվել է որմ, որը կենտրոնում ունի մուտք, և որը տանում է ներքուստ 3,25×2,20 մ չափեր ունեցող աղյուսա-

⁴² Գիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 143: Ակներևաբար, նույն Գրիգորն է հիշատակված հուշարձանախմբի Ս. Հովհաննես եկեղեցու մուտքի բարավորի նվիրատվական արձանագրության մեջ. «... Ես Գրիգոր, որդի Սմայատա, աստնի տեր...», նշվ. աշխ., էջ 142:

⁴³ Նշվ. աշխ., էջ 143–145:

⁴⁴ Գիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 141:

⁴⁵ Նշվ. աշխ., էջ 142:

⁴⁶ Նախորդ ուսումնասիրողներն այս կառույցը ամբողջովին ավերված տեսնելով՝ այն համարել են մատուռ: Տե՛ս Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, էջ 54: Ս. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 81: Ս. Հովհաննեսի ավանդատների միջև մուտք է ենթադրել Ս. Մնացականյանը (նշված աշխ., էջ 138): Սակայն պեղումներով պարզվեց, որ եկեղեցու միակ մուտքն արևմտյան կողմից է:

շար հատակով հարկաբաժին: Սյունասարահի հյուսիսային մասը շարված է ժայռեղեն հարթեցված հիմքի վրա, որը հատակ է ծառայել կառույցի մեծ մասի համար: Ժայռից գերծ հարավային մասում 80 սմ խորությամբ բացվել է միջնադարյան թաղում: Նորաբաց սյունասարահի գեղարվեստական հարդարանքի մասին են վկայում հայտնաբերված ճարտարապետական մանրամասները՝ քանդակագարդ քարերը, հյուսիսային սյունաշարի խոյակների գլանաձև և ատամնաշար ներկայացնող քանդակները: Ուշագրավ է առյուծի գլխի և սափորների քանդակներով հարդարված մկրտության ավազանը պսակող քարը:

Ճարտարապետական հորինվածքով նորաբաց սյունասարահը կրկնում է Ս.Աստվածածին եկեղեցու հարավային կողմի սրահի ձևերը: Այս երկու կառույցները, ակներևաբար, հիմնարկվել են միաժամանակ և միևնույն վարպետների ստեղծագործության արգասիք են: Նմանատիպ սյունասարահները տարածված էին Սյունիքի X–XI դդ. հոգևոր կենտրոններում՝ Տաթև, Որոտնավանք, Վահանավանք և այլն:

Նորաբաց սյունասարահի հյուսիսարևմտյան անկյունում բացվել է Ս.Հովհաննեսի գավիթ տանող մուտքը: 1987 թ. պեղումների ընթացքում ստվար հողաշերտից ազատվել է գավթի զգալի մասը, ամբողջությամբ մաքրվել է 1988 թ.: Ավելի քան 150 մ² մակերես զբաղեցնող այս կառույցը շարված է բազալտի ճեղքված և կոպտատաշ քարերով ու կրաշաղախով: Գավթի հատակին բացվեցին կառույցի ծածկը կրող սյուների տեղաշարժված չորս բազալտե խարիսխներ: Որմերի պահպանված բարձրությունը հասնում է մինչև 1,5 մ: Առանձնապես վատ է պահպանվել արևմտյան որմը, որը գրեթե ամբողջությամբ փլված է: Կառույցն ունեցել է երկու մուտք՝ հարավից և արևմուտքից: Գավթի արևելյան մասում՝ Ս.Հովհաննեսի մուտքի երկու կողմերում՝ եկեղեցու արևմտյան որմին կից, բացվել են երկու որմեր, որոնք ակներևաբար ծառայել են խաչքար գետեղելու համար (հմմտ. տե՛ս Հովհաննավանք, Թեղեկյաց, Ամաղու և այլն): Գավթի տապանաքարերի զգալի մասն ունի մարդու փորագիր պատկերաքանդակներ և տապանագրեր: Տապանագրերում հիշատակված են Գրիգոր Մածնաբերդեցի

իշխանի կին Էսուկանը, Լիպարիտ իշխանը, վանքի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը, պարոններ Դետը, Խոշիշը, Գոնցան և ուրիշներ:

Սյունասարահի և գավթի պեղումներով հայտնաբերվել է շինարարական բովանդակությամբ երեք արձանագրություն, որոնք վերաբերում են տարբեր ժամանակներում Ս.Հովհաննես եկեղեցու նորոգմանը: Հայտնաբերվել են վաթսուներից ավելի խաչքարեր, որոնց մեծ մասն ունի X–XVII դդ. հիշատակագրեր:

1988 թ. պեղումներ են իրականացվել վանքի Ս.Աստվածածին եկեղեցու արևելյան կողմում:

Այստեղ բացվել են 6,6×4,4 մ չափեր ունեցող եկեղեցու մնացորդներ: Այն կառուցվել է Ս.Աստվածածին եկեղեցու արևելյան պատի տակ՝ նրանից 145 սմ հեռավորությամբ: Շարված է բազալտե սրբատաշ, կոպտատաշ քարերով, երեսապատված է կրաշաղախով: Որմերի պահպանված բարձրությունը հասնում է 1,5 մ: Եկեղեցու միակ մուտքը հարավային կողմից է: Բեմն ուղղանկյունաձև է, որը հազվադեպ երևույթ է Սյունիքի զարգացած միջնադարի ճարտարապետական հուշարձաններում: Այն առավել բնորոշ է Արցախի XII–XIII դդ. հուշարձաններին⁴⁷: Եկեղեցու հատակը զբաղեցնում են երեք հարթ տապանաքարեր, որոնցից մեկին փորագրված է 1445 թ. Խություն Մղելիքին վերաբերող հիշատակագիրը: Եկեղեցու որմից ընկած քարերից մեկին պահպանվել է շինարարական բովանդակությամբ արձանագրություն, որը հաղորդում է կառույցը 1215 թ. նորոգելու մասին: Գավթում բացված 200 մ² մակերեսով հրապարակն ամբողջովին ծածկված է հարթ տապանաքարերով:

1988 թ. դարպասի վրա բացվեցին 2,95×2,70 մ չափեր ունեցող սրբատաշ բազալտի քարերով կառուցված եկեղեցու մնացորդներ: Մուտքն արևմտյան կողմից է: Հատակը շարված է բազալտի սրբատաշ քարերով: Բեմն աղյուսաշար է: Նորաբաց եկեղեցու հյուսիսային որմի պահպանված մասն արտաքուստ ամբողջովին ծածկված է խաչերի քանդակներով: Կառույցի ներքին հարդարանքին առանձնակի տեսք են տալիս բեմի զույգ որմնասյուների հիմքերի քարերի քանդակները: Միակ արևմտյան մուտքի առկայությունը, որը որևէ ուղղությամբ անցում չունի, են-

⁴⁷ Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985:

թաղրել է տալիս, որ այս դռանը մոտեցել են կամարակապ դարպասին և Ս.Հովհաննես եկեղեցուն հենված փայտե աստիճաններով:

Դարպասի վրա կառուցված նմանատիպ եկեղեցիներ Սյունիքում հայտնի են Տաթևի և Վահանավանքի հուշարձանախմբերում: Վահանավանքի վանական համալիրում, դարպասի վրա, 1086թ. Սյունյաց Գրիգոր թագավորի կինը՝ Շահանդուխտ թագուհին իր քրոջ՝ Կատայի հետ կառուցել է Ս.Աստվածածին եկեղեցին⁴⁸: Այս մասին պատմիչ Ստեփանոս Օրբելյանը գրում է. «...կանգնեալ կամարս մեծամեծս, և ի վերայ՝ եկեղեցիս և սրահս...»⁴⁹: Դարպասի վրա կառուցված հաջորդ եկեղեցին Տաթևի վանքի Ս.Աստվածածին է՝ կառուցված 1087թ., Սյունիքի Գրիգոր եպիսկոպոսի ջանքերով: Կառույցի հարավային որմին արձանագրված է. «...ԿԱՆԳՆԵՑԻ ԿԱՄԱՐԲՍ ԵՒ Ի ՎԵՐԱ ԶԵԿԵՂԵՑԻՍ...»⁵⁰: Նորաբաց կառույցը հենված է Ս.Հովհաննես եկեղեցու հյուսիսային որմին: Այս հատվածում (երկու որմերի միացման մասում) պահպանվել է Ս.Հովհաննեսի նախնական քիվը՝ ակներևաբար կառուցված X դ.:

Դրանք կերտվել են Ս.Աստվածածնի քիվերի օրինակով, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք համաժամանակյա են: Ավելի ուշ՝ մատուռի կառուցումից հետո, վերանորոգվել է Ս.Հովհաննես եկեղեցին, որի ժամանակ փոխվել է քիվը (թերևս 1281թ., որի մասին վկայում է դրա վրա փորագրված նորահայտ շինարարական արձանագրությունը): Ս.Հովհաննեսի նախնական քիվի փոքրիկ հատվածն անխաթար է մնացել՝ մատուռ հիշեցնող եկեղեցու հարավային պատի մեջ պահպանվելու պատճառով:

1989թ. հնագիտական ջոկատը ձեռնամուխ եղավ բացելու Ս.Հովհաննես եկեղեցու և Ս.Աստվածածնին կից սյունասարահի միջև ընկած միջանցքի և նրա արևելյան մասում կառուցված դարպասի տարածքը: Այս հատվածում պահպանվել են շինարարական երկու շերտեր: Ստորին շերտը, որի աննշան մասն է բացվել, վերաբերում է Ս.Հովհաննեսի կառուցման ժամանակներին: Այն համընկնում է եկեղեցու և գավթի հատակներին: Վերին հատակը նախորդից բարձր է

շուրջ 1,3 մ: Այն համընկնում է Ս.Աստվածածնին կից կառուցված սյունասարահի հատակին: Վերին շերտը պեղելիս միջանցքի տարածքում հայտնաբերվեցին կից սյունասարահի շինարարական մանրամասներ, խաչքարեր, թևավոր խաչերի բեկորներ և որոշ հնագիտական նյութեր: Բացվել են նաև հարթ տապանաքարեր, որոնք հղկված սալեր են՝ առանց զարդապատկերների և հիշատակագրերի: Միջանցքով դեպի գավթի անցումը կատարվել է աստիճաններով, քանի որ դրանք ընդգծված տարբեր բարձրություններ ունեն:

Սյունասարահի հարավային կամարաշարի հիմքերն ամրացնելու նպատակով հարավից դրվել է հողի շաղախով և ճեղքված քարերով կառուցված լրացուցիչ որմածք: Դրան կից դրվել են մի քանի աստիճաններ, որոնցով միջանցքից գավթի են անցել: Աստիճանների երկու կողմերում զետեղվել են պատվանդաններ և խաչքարեր, որոնցից ներկայումս պահպանվել են միայն հարավային կողմում գտնվողները:

Միջանցք-դարպասի մաքրման ժամանակ հայտնաբերվել են երկրորդ հարկում կառուցված փոքր եկեղեցու սրբատաշ քարերը, որոնցից երկուսին պահպանվել է Հովհաննես Օրբել Սյունյաց եպիսկոպոսի (1303–1324թթ.) 1311թ. արձանագրությունը: Այն փորագրված է եղել մի քանի քարերի վրա, առայժմ հայտնաբերվել է երկուսը: Արձանագրությունը թերի է, իսկ պահպանված հատվածը վերաբերում է Սյունյաց մետրոպոլիտի կողմից պատարագներ սահմանելուն:

1992–1993թթ. պեղումներ են իրականացվել վանքի Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան մասում, որտեղ բացվել է մեծ չափերի (16,6×7մ) թաղակապ սրահը: Այն կառուցված է բազալտի սրբատաշ և կոպտատաշ քարերով և կրաշաղախով: Սրահը հիմնականում կառուցված է կոպտատաշ ճեղքված քարերով: Սրբատաշ կանոնավոր քարերով են կառուցված շինության կոնստրուկտիվ առումով առավել կարևոր մասերը (սյուներ, կամարներ, անկյուններ): Շինարարական տեխնիկայի այս ձևն առավելապես տարածված է Սյունիքի զարգացած միջնադարի վաղ փուլի կառույցներում⁵¹: Նորաբաց սրահն ունի աղյուսաշար հատակ: Հայտնաբերված նյութերը

⁴⁸ Գ.Գրիգորյան, Վահանավանք, էջ 28, 71:

⁴⁹ Ստ. Օրբելեան, Պատմություն, էջ 341:

⁵⁰ Գիվան հայ վիճակագրության, պրակ II, Գորիսի, Միսիանի և Ղափանի շրջաններ, կազմ.՝ Ս.Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 28: Ավելի մանրամասն տե՛ս Ս.Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, էջ 188–194:

⁵¹ Վ.Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 203–221:

խիստ սակավ են, գտնվել են կոթողների արձանագիր բեկորներ: Կառույցի հարավային սյունաշարի որմնասյունին քանդակված խաչաքանդակի ստորին մասում կարդացվում է.

ԶՎԱՍԱԿ ՅԻՇԵՑԵՔ:

Նորաբաց սյունասրահի հյուսիսային կողմի կամարաշարի տակ առանձնացված խցերը և հարավային կողմում փոքրիկ սենյակների առկայու-

թյունը հիմք են տալիս եզրակացնելու, որ այն եղել է գրատուն-մատենադարան:

1990-ական թվականներին ծրագրվում էր պեղել Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմի նորաբաց կառույցը և նրա հարավային մասի գավթանման շինությունը: Դրանով կամբողջանային Ցաղաց քարի արևմտյան հուշարձանախմբի գլխավոր կառույցների պեղումները:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ

Ցաղաց քար վանքի մոնումենտալ շենքերը հարուստ են բազմազան քանդակներով, որոնք առանձին շուք են հաղորդում դրանց: Քանդակներով առանձնապես հարուստ են վանքի հուշարձանների արևելյան խմբի եկեղեցիները, որոնք կառուցվել են 1041թ. հայր Վարդիկի վանահայրության տարիներին: Այս խմբի գլխավոր կառույցը Ս.Կարապետ եկեղեցին է, որի բոլոր որմերը հարդարված են բազմազան քանդակներով. կտիտորական, հերալդիկ քանդակներ, շքամուտք, բարավոր, պատուհանների պսակներ և շրջանակներ, գմբեթ, բեմառէջք և այլն: Հարավային որմի վերին մասում ագուցված է եղել կտիտորական բարձրաքանդակ, որը ներկայումս ընկած է եկեղեցու հարավային կողմում, նրանից շուրջ 25 մ հեռու⁵²:

Պատկերաքանդակի կենտրոնում Ս.Կարապետ եկեղեցու մանրակերտն է, որի երկու կողմերում կանգնած են ձեռքերը դեպի այն մեկնած հովանավորները⁵³:

Բարձրաքանդակը խաթարված է, մարդու երկու քանդակներն էլ թերի են: Աջ կողմում կանգ-

նածի (աջակողմյան) քանդակն ավելի լավ է պահպանվել: Հստակ երևում է դեմքի և մարմնի մի մասը: Քանդակների վնասվածությունը հնարավորություն չի տալիս հստակ հետևություն անելու:

Հայ միջնադարյան ճարտարապետության մեջ կտիտորական քանդակները լայն տարածում ունեին⁵⁴: Դրանք առկա են այն նշանավոր վանքերում, որտեղ, որպես կառույցի հովանավորներ, հանդես են եկել այս կամ այն իշխանական տան ներկայացուցիչները, կամ տվյալ տարածքի հոգևոր առաջնորդները: Անշուշտ, ավելի մեծ թիվ են կազմում աշխարհիկ առաջնորդների քանդակները, որոնք ավելի մեծ հնարավորություններ ունեին խոշոր ներդրումներ պահանջող կառույցների միջոցները հոգալու: Իզուր չէ, որ կտիտորական քանդակներ կան նահանգի կամ գավառի հոգևոր կենտրոններ հանդիսացող նշանավոր վանքերում:

Հայտնի են Գագիկ Արծրունու քանդակը Աղթամարում⁵⁵, Գուրգեն և Սմբատ Բագրատունիներիը՝ Սանահինում⁵⁶, Հաղբատում⁵⁷, Գագիկ

⁵² Ժամանակին, բարձրաքանդակը հիշատակելիս, Ե.Լալայանը նկարագրել է այն, բերել լուսանկարը: Տե՛ս Ե. Լալայան, «Ազգագրական հանդես», 26, էջ 70:

⁵³ Ե. Լալայանի կարծիքով՝ մարդու քանդակը մեկն է: Տե՛ս «Ազգագրական հանդես», 26, էջ 20:

⁵⁴ Ս.Մնացականյան, Սիսավանի բարձրաքանդակները և տաճարի կառուցման ժամանակը, Տեղեկագիր, 1960, 10: Նույնի՝ Տեղեկի տաճարի կտիտորական բարձրաքանդակը, ՊԲՀ, 1971, 4: Մ.Սարգսյան, Սրենի տաճարի հիմնադիրների պատկերաքանդակները, ՊԲՀ, 1966, 4: Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979: Կտիտորական հորինվածքները լայն տարածում ունեին քրիստոնեական արվեստում, այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ս.Амиранашвили, История грузинского искусства, том. I, Москва, 1950. А.С.Преображенский, Ктиторские портреты средневековой Руси, XI –начало XVI века, Москва, 2010.

⁵⁵ S. Der Nersessian, Aght'amar, Cambridge, Mass., 1965, էջ 11–35: Ս.Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 79: Ս.Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակները IX–XIV դդ., Երևան, 1976, էջ 58–66: Ս.Մնացականյան, Աղթամար, Երևան, 1983, էջ 51–55: Կ.Սաթևոսյան, Աղթամար, Ս. Էջմիածին, 2013, էջ 55–58:

⁵⁶ Կ.Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 18–25:

⁵⁷ Կ.Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 19–66:

Ա. Բագրատունունը՝ Անիում⁵⁸, Զաքարե և Իվանե Զաքարյաններինը՝ Հառիճում⁵⁹, Հաթերքի իշխան Վախթանգի և Արզուխաթունի որդիներ Հասանինը և Գրիգորինը՝ Դադիվանքում⁶⁰, Վախթանգինը և նրա որդի Հասան Ջալալինը՝ Գանձասարում⁶¹, Հաղարծնի վանքի առաջնորդներ Հովհաննեսինը և Սարգսինը՝ համանուն վանքում⁶²:

Ս. Կարապետ եկեղեցու կոնստրուկտիվ հորինվածքը մեծ մասամբ եղծված է, ուստի դժվար է ստույգ եզրակացնել, թե ովքեր են պատկերված: Քանդակներն, ամենայն հավանականությամբ, վերաբերում են եկեղեցու կառուցման ժամանակաշրջանում (1041 թ.) Վայոց ձորում կառավարող իշխաններին, կամ էլ՝ վանքի հետ կապված հոգևորականներին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վանքի 1041 թ. կառույցները «շինված են հավասար կերպով սրբատաշ և մեծամեծ քարերով, խնամքով և ճաշակով», ինչպես նաև Ս. Կարապետի որմերին «իշխանական գինանշանի տիպի բարձրաքանդակների» առկայությունից ելնելով՝ Ս. Բարխուդարյանն իրավացիորեն ենթադրում է, որ «շինությունը հովանավորված է եղել որևէ աշխարհիկ իշխանի կողմից»⁶³: Քանդակները, ամենայն հավանականությամբ, պատկանում են Վայոց ձորի տերերին, որոնց նստոց Եղեգիս գյուղաքաղաքից Ցաղաց քար վանքը հեռու է ընդամենը մի քանի կիլոմետր: Հայտնի է, որ IX դ. 20-ական թվականներից սկսած Վայոց ձորը մտնում էր Սյունյաց գահերեց իշխանների տիրույթների մեջ, որի քաղաքական կենտրոնն էր Եղեգիս գյուղաքաղաքը: Վայոց ձորի տերերի գահերեցությունն ընդհատվում է 960-ական թվերին, երբ մահանում է Վասակ գահերեց մեծ իշխանը: Վերջինիս վախճանվելուց հետո պատմիչ Ստեփանոս Օրբելյանը որպես երկրամասի տերեր հիշատակում է նրա երկու որդիներին՝ Սմբատին ու Գագիկին⁶⁴: Վե-

րոհիշյալ իշխանների և նրանց սերունդների մասին մեզ ոչինչ հայտնի չէ:

Ակներև է, որ Վասակ գահերեցի որդիներից որևէ մեկի շառավիղներն են պատկերված Ցաղաց քարի կոնստրուկտիվ բարձրաքանդակում: Քանդակներից մեկը կարող էր պատկանել վանքի առաջնորդ հայր Վարդիկին, որը, ինչպես նշվել է վերևում, Ս. Կարապետ եկեղեցու կառուցման ժամանակ եղել է վանքի առաջնորդը: Խնդրո առարկա քանդակախմբի կենտրոնում պահպանվել է եկեղեցու մանրակերտի վերին մասը: Հստակ երևում է եկեղեցու հարավային հատվածը՝ մուտքով, կամարաշար քանդակներով թմբուկը և վեղարը: Եկեղեցու արևմտյան կողմում հասակով մեկ կանգնած է հոգևորական՝ ձախ ձեռքն ուղղած դեպի կառույցի քանդակը: Նույն անձը, որն անշուշտ հայր Վարդիկն է, քանդակված է նաև եկեղեցու արևմտյան կողմում հայտնաբերված մի այլ քանդակազարդ սյունանման քարի վրա: Պատկերում նա նույն կերպ է քանդակված՝ մորուքավոր, սքեմով, հողաթափով, գլխին վեղարով, մի ձեռքին գավազան, մյուսին՝ ձեռաց խաչ բռնած: Առաջնորդական հանդերձանքով և կեցվածքով այս հոգևորականն անշուշտ ներկայացնում է վանքի առաջնորդ հայր Վարդիկ վարդապետին: Մեզ հետաքրքրող կոնստրուկտիվ քանդակում նույնպես Վարդիկ վանահայրն է: Նրա դեմքը երկարով է, լավ արտահայտված քթով և ալեխառն մորուքով: Գլխին սրածայր վեղար է, հագին՝ մինչև ոտքերը հասնող սքեմ, ուսերին՝ զիգզագ զարդերի հյուսվածքով հարդարված շուրջառ-նափոնտ, որը ճարմանդով ամրացված է հագուստին: Հոգևորականն աջ ձեռքով բռնել է առաջնորդական գավազանը, որը վերնամասում թեքված կլորավուն գլխով երկար ձող (ցուպ) է: Այս տիպի գլուխները հետագայում դարձան օձագլուխ եպիսկոպոսական գավազաններ, իսկ ավելի վաղ, տվյալ դեպ-

⁵⁸ H. Mapp, Ани, книжная история города и раскопки на месте городища, Ленинград-Москва, 1934, рис. 90–91. Ստ. Մնացականյան, Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը, Երևան, 1969, էջ 105–106: Թ. Թորամանյան, Ջվարթոց, Գագկաշեն, Երևան, 1984, էջ 84–85:

⁵⁹ Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 109–116:

⁶⁰ Ս. Մնացականյան, նույն տեղում: Կ. Մաթևոսեան, Ա. Անտիսեան, Ա. Զարեան, Ք. Լամուրէ, Դադիվանք. Վերածնունդ հրաշք, Երևան, 2018:

⁶¹ J. M. Thierry, Armenian art, New York, 1989, էջ 526:

⁶² Դիվան հայ վիճագրության, պրակ VI, կազմ.՝ Ս. Ավագյան, Հ. Զանփոլադյան, Երևան, 1977, էջ 44–46: Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, էջ 127:

⁶³ Դիվան հայ վիճագրության, պրակ III, էջ 141:

⁶⁴ Ստ. Օրբելեան, Պատմություն, էջ 329:

քում XI դ., դրանք քննվող խմբաքանդակում ունեին կորագույն վերջավորություն: Ամեն ինչ հուշում է, որ հոգևորականը վանքի առաջնորդ հայր Վարդիկն է, որը հիշատակված է պատմագիր Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ և վանական համալիրի վիմագրերում: Գավազանը, ձեռաց խաչը և թիկնոցը վկայում են դրանք կրողի հոգևոր բարձր աստիճանի մասին:

Ցավոք, եկեղեցու մանրակերտի արևելյան կողմի կտիտորի քանդակը չի պահպանվել: Միակ հատվածը դեպի եկեղեցին մեկնած երկու ձեռքերն են: Եթե հայր Վարդիկի պարագայում հիմքեր կան պնդելու, ապա մյուս անձնավորության ով լինելը որոշելը շատ ավելի բարդ է: Կարելի է ենթադրել, որ այն Գագիկ Բ Բագրատունու քանդակն է, քանի որ նրա անունը քանիցս վկայված է Ս. Կարապետ և Ս. Նշան եկեղեցիների որմերին փորագրված վիմագրերում: Քանդակը կարող էր պատկանել նաև Վայոց ձորի գահերեց իշխաններից որևէ մեկին: Ակներևաբար այս նույն հոգևորականն է քանդակված Ս. Նշանի մաքրման աշխատանքների ժամանակ ի հայտ եկած մի շինարարական մանրամասնի վրա:

Հոգևորականի մեկ այլ քանդակ է պահպանվել երկու կողմից գլանաձև զարդերիզ ունեցող մի քարի վրա, որն ընկած է Ս. Կարապետ եկեղեցու հարավային կողմում: Այստեղ պատկերված է սքեմով, թիկնոցով, գլխին վեղար կրող, մորուքավոր մի հոգևորական: Նրա ձախ ձեռքը մարմնի վրայով իջնում է մինչև ոտքը, իսկ աջով բռնել է նույնատիպ, ուռուցիկ, թեք գլխով հայրապետական գավազանը: Հոգևորականի հագուստն իջնում է մինչև ոտնաթաթերը:

Ինչպես վերևում նշվեց՝ Ս. Կարապետի որմերին ագուցված են իշխանական ժառանգական տարբերանշաններ՝ հերալդիկ քանդակներ: Խորհրդանշական այս քանդակներից մեկը գե-

տեղված է եղել եկեղեցու հարավային որմի վերին մասում: Դեռևս XX դ. սկզբին այն եղել է իր տեղում՝ եկեղեցու պատի մեջ ագուցված, որը տեսնում ենք Ե. Լավայանի, Ք. Հովհաննիսյանի հրատարակություններում: Այն թևատարած արծիվ է, որը մագիլների մեջ գառ կամ խոյ է բռնել: Նմանատիպ արծվաքանդակները մեծ տարածում ունեին միջնադարյան Հայաստանի հուշարձաններում⁶⁵: Թևատարած արծիվների հրաշալի քանդակներ կան Զվարթնոցի տաճարի սյուների խոյակների վրա, ինչպես նաև ավելի ուշ՝ զարգացած միջնադարի բազմաթիվ հուշարձաններում: Ճիրաններում որս բռնած արծվի հերալդիկ քանդակը զարդարում է Հայաստանի բազմաթիվ հուշարձանների որմերը՝ համարվելով կառույցի շինարարությունը հովանավորող իշխանական տան խորհրդանիշ: Այս առումով հետաքրքիր են Վասպուրականի Արծրունյաց իշխանական տանը վերաբերող հերալդիկ նշանները՝ քանդակված Աղթամարի տաճարի որմերին⁶⁶: Զոհին բռնած շուրջ երկու տասնյակ թևատարած արծիվներ են քանդակված Անիի Մայր տաճարի, միջնաբերդի Պալատական եկեղեցու⁶⁷, Ս. Գրիգորի (Տիգրան Հոնենց) ու Փրկչի եկեղեցիների պատերին ու քաղաքի պարիսպներին⁶⁸:

Մամիկոնյան իշխանների զինանշանը (երկգլխանի թևատարած արծիվ՝ մագիլներում գառ բռնած) պահպանվել է Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքի գավթի խորանի որմին⁶⁹:

Մագիլներում գառ կամ խոյ բռնած թևատարած արծվի քանդակներ կան Վայոց ձորի Գոմք գյուղի որմնափակ խաչքարին կից մատուռի արևելյան որմին (1263 թ.)⁷⁰, Թանատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու գմբեթի թմբուկի հարավային պատուհանի գլխին (1273 թ.)⁷¹, Հերիերի Ս. Սիոն վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան որմին (1282 թ.)⁷², Ամաղուի Նորավանքի

⁶⁵ Կ. Մաթևոսյան, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017, էջ 70–82: Ա. Պետրոսյան, Թոշնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական քանդակում. պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը, «Բանբեր Մատենադարանի», 2022, հ. 33, 355–356:

⁶⁶ S. Der Nersessian, Aght'amar, էջ 14, 18: Ս. Ի. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», 1970, թիվ 3, էջ 192: Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 78–102: Ստ. Մնացականյան, Աղթամար, Երևան, 1983, էջ 88–95:

⁶⁷ Ս. Ի. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշաններ..., էջ 191:

⁶⁸ Ս. Կարապետյան, Անի ՌԾ, Երևան, 2011, էջ 137, 183:

⁶⁹ Գ. Շախկյան, Լոռի. պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986, էջ 38:

⁷⁰ Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 193:

⁷¹ Նշվ. աշխ., էջ 73:

⁷² Նշվ. աշխ., էջ 51:

Բուրթելաշեն եկեղեցու արևելյան ճակատին (1389 թ.)⁷³: Նույն հորինվածքն է զետեղված նաև Գեղարդի վանքի գլխավոր եկեղեցու թմբուկի հարավարևելյան մասում (1215 թ.): Հայտնի է, որ այս վանքը մտնում էր Վայոց ձորի տերերից Պողոսյան իշխանների տիրույթների մեջ: 1283 թ. Պողոս իշխանի ժամանակ Գեղարդում կերտված Պողոսյանների իշխանական ժայռափոր դամբարանի որմին քանդակված է այս տոհմի զինանշանը, որը ներկայացնում է երկու շղթայակապ առյուծներին պահող եզան գլուխ, իսկ դրանից ներքև՝ թևատարած արծիվ՝ մագիլներում գառ բռնած⁷⁴:

Ինչպես տեսնում ենք՝ վերոհիշյալ հուշարձանները կառուցվել և քանդակագործվել են Ցաղաց քար վանքի Ս. Կարապետ եկեղեցու կառուցումից երկու հարյուրամյակ հետո միայն, Սյունյաց աշխարհի տեր Օրբելյանների և Պողոսյանների իշխանության տարիներին (սմանատիպ քանդակներ հանդիպում են նաև ավելի ուշ՝ հետագա դարերի տապանաքարերի վրա):

Հայտնի է, որ Հայաստանը սելջուկներից ազատագրելուց հետո Ջաքարյանները գրավված տարածքում ունեցած ծառայությունների համար կողմնակալ-կառավարիչներ են նշանակում տեղական ավագանու ներկայացուցիչներին (Բագրատունիներ, Պահլավունիներ, Արծրունիներ, Մամիկոնյաններ, Վաչուտյաններ և այլն): Պատմիչ Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ Սյունիքում կողմնակալության իրավունքով տիրույթներ են ստանում Լիպարիտ Օրբելյանն ու Վասակ Խաղբակյանը⁷⁵: Վերջիններս իրենց պաշտոններում նշանակվել են 1220 թ. առաջ, որի մասին թողել են արձանագրություններ՝ Լիպարիտ Օրբելյանը՝ 1221 թ., Ամաղուի Նորավանքում, իսկ Վասակ Խաղբակյանը՝ 1220 թ., Արատեսի վանքում:

Ցաղաց քար վանքում մագիլներում գառ բռնած թևատարած արծիվի քանդակը վկայում է, որ այն համարվել է Վայոց ձորի տերեր Սյունյաց Վասակ գահերեց իշխանի շառավիղների տոհմական նշանը: Նույն խորհրդանշանի առկայությունը Վայոց ձորի հետագա տերերի՝ Օրբելյանների և Պողոսյանների կողմից հովանավորված կառույցներում վկայում է, որ այս իշխանական տներն իրենց համարում են Սյունիքի նախկին տերերի օրինական ժառանգորդը: Զինանշաններին նվիրված աշխատության մեջ Ռ. Մաթևոսյանն այն համարում է մի քանի տոհմերինը⁷⁶ (Մամիկոնյաններ, Օրբելյաններ, Պողոսյաններ, Արծրունիներ և այլն): Զինանշանը մինևույն ժամանակաշրջանում չի կարող պատկանել մի քանի իշխանական տների: Վերջին տարիներին կա տեսակետ, ըստ որի այն ունի խորհրդանշանային իմաստ (համբարձում, հոգու երկվություն, արծիվն իբրև երկնքի, ուժի խորհրդանիշ կապվում է վերակենդանացման, նաև անմահության հետ)⁷⁷:

Ցաղաց քար վանքի հերալդիկ քանդակներից հաջորդը՝ առյուծի և եզան կամ ցլի մենամարտի տեսարանով, ագուցված է Ս. Կարապետի հյուսիսային որմին: Այս երկու կենդանիների գոտեմարտը ներկայացնող քանդակը ևս մեծ տարածում ուներ միջնադարյան Հայաստանում:

Թ Ո Կ Դ Ո Ր Ո Ւ Մ Վ Ե Ր Ս Տ Ի Ն Ն Ո Ր Ո Գ Ե Կ Ա Ի Ե Կ Ե Ղ Ե Կ Ի Զ Ե
Ռ Ե Ն Ա Տ Ո Ւ Ե Ւ Ե Ա Ռ Ա Զ Ե Ռ Դ Մ Բ Ո Ւ Խ Տ Ի Ս Գ Ր Ե Կ Ի Ն Ի Տ
Ա Ր Ի Ե Դ Ա Ր Զ Ա Մ Զ Խ Ա Զ Գ Ի Ի Տ Ե Բ Ի Ի Ր Ե Ի Բ Կ Ա Տ Ի Ն Կ Ա Տ
Ա Ր Ի Զ Տ Ր Ա Մ Ա Ն Ա Կ Ս Ա Ի Տ Ն Ե Ի Ն Ի Տ Ե Ե Ի Ո Ր Տ Ա Կ Ա Ր
Ա Կ Ն Կ Ա Ե Դ Ա Տ Ա Պ Ա Ր Տ Ի Ն Ի Բ Է

ԹՎԻՆՆՆ ՈԿԻ (1215թ.), ՅՈՐՈՒՄ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՅԱԻ ԵԿԵՂԵՑԻ ԶԵ/ՌՆ ՏԱՏՈՒՆԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԳ ՄԲ ՈՒՏՏԻՍ ԳՐԵՑԻՆ Ի Տ/ԱՐԻՆ :Դ: ԱԻՐ ԺԱՄ ԶԽԱԶԳԻՏՆ, Բ ԻՒՐ ԵՒ Բ ԿԱՏԻՆ, ԿԱՏ/ԱՐԻԶ ՀՐԱՄԱՆԱՑՍ ԱԻՐՀՆԻՆ Ի ՏԷ ԵՒ ՈՐ ՀԱԿԱՌ/ԱԿՆ ԿԱՆ, ԴԱՏԱՊԱՐՏԻՆ Ի ԲԷ:

Արձանագրությունը վկայում է նորաբաց կառույցի՝ 1215թ. վերանորոգման մասին, որն իրականացվել է ոմն Տատունի կողմից:

99. Տապանաքար, նորաբաց եկեղեցում, երեք տող.

ՉԼ ԱՅՍԵ ԴԻՐ ՀԱՆԳ
ԸՍՏԵԱՆ ՅԱՐԿՍԱ
ՊԱՆԻՒՈՒԹՈՒ ՄՂ ԼԻՔԻՆ

ԹՎԻՆՆՆ Զ/ՂԴ (1345թ.) ԱՅՍԵ ԴԻՐ ՀԱՆԳ/ԸՍՏԵԱՆ ՅԱՐԿ ՏԱ/ՊԱՆԻ ԽՈՒԹՈՒՄՂԼԻՔԻՆ:

100. Խաչքար, բակում, ութ տող.

ԹՎ
ՈԿ
ԵՐ
Կ
Ա
ՆԳՆԵԿ ԱԻ
ԽԱԶՍԲԱՐԵ
ԽԱԽՐԱՐ
ԹՈՂԻՄՈ
ՍԻ

ԹՎԻՆՆՆ/ՈԿ/(1211թ.) ԵՐ/ԿԱ/ՆԳՆԵՅԱԻ/ԽԱԶՍ ԲԱՐԵ/ԽԱԽՐ ԲԱՐ/ԹՈՂԻՄՈ/ՍԻ:

101. Խաչքար, բակում, երկու տող.

ԽՁՍԳՐԳԻՊԿԱՆ

Թ ռ ջ
Ի

Խ[Ա]Ձ(=2)Ս ԳՐԳԻՊԿԱՆ Թ[ՎԻՆ] ՌԻՋ
(1577 թ.):

102. Քարե գուռ, հայտնաբերվել է գավթից արևմուտք, վերին հարթ մակերեսին կա շուրջանակի մեկ տող.

ԵՂՇԻՉ
ԽՁՍԳՐԳԻՊԿԱՆ Թ[ՎԻՆ] ՌԻՋ
ԶՃԳՆԱԻՌ ԵՐ.../ԱՐՍ ԶԲԱՐՍ[ԵՂ] ԵՒ
ԶՅՈՂ[ԱՆԷՍ] ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ/ԹՎ-
[ԻՆ] ՉԸԴ (1326 թ.):

ԶՃԳՆԱԻՌ ԵՐ.../ԱՐՍ ԶԲԱՐՍ[ԵՂ] ԵՒ
ԶՅՈՂ[ԱՆԷՍ] ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ/ԹՎ-
[ԻՆ] ՉԸԴ (1326 թ.):

103. Խաչքար, բակում, միայն թվականը, երկու տող.

Թ
ՆԻՋ

Թ[ՎԻՆ]/ՆԻՋ (977 թ.):

104. Խաչքար, բակում, գույգ խորադիր կամարների տակ մեկական խաչաքանդակ, որոնց տակ՝ առանձին հիշատակագրեր.

ՄԱԿՉՍԲԱ: ՄԲԽՁՍ Շ
ԵՆՍՆԱ ԱԴ. ԱՆ ԱԿԻՆ
ԻՆ

ՄԲ Խ[Ա]ՁՍ ԲԱՐ/ԷԽ[ԱԻ]Ս ՆԱԻ[ԱՍ]-
ԱՐԴ/ԻՆ: ՄԲ Խ[Ա]ՁՍ Շ/ԱՀԱՐ/ԻՆ:

105. Օրորոցաձև տապանաքար, միայն թվականը.

ԹՎ ԶԽ

ԹՎ[ԻՆ] ՁԽ (1491թ.):

106. Խաչքար, դարպաս-միջանցքում, խաչաքանդակի շուրջը, մեկ տող.

ԿԱՆԿԱՆԵՅԱԻ ԽԱՂԶՍ ՄԱՐԻԱՄՈՒ
ՓՐ / [ԿՈՒ]ԹԻԻՆ / ՀՈԳՈ ԻԻՐ / ԹՎԻՆ /
ՁԺԳ (1464թ.)

ԿԱՆԿԱՆԵՅԱԻ ԽԱՂԶՍ ՄԱՐԻԱՄՈՒ
ՓՐ / [ԿՈՒ]ԹԻԻՆ / ՀՈԳՈ ԻԻՐ / ԹՎԻՆ /
ՁԺԳ (1464թ.):

107. Խաչքար, դարպաս-միջանցքում, խաչաքանդակի շուրջը, մեկ տող: Թվականը փորագրված է հորիզոնական խաչաթևերից վերև.

ԿԱՆԳՆԵՅԱԻ ԽԱՂԶՍ Ի [ԲԱՐԵԽ]ԱԻՍՈՒ
ԹԻԻՆ / ԸՆՈՐՀ / ԱՅ ՏՐ ԹՈՒՄԻՆ ՀՈԳՈ,
ԹՎԻՆ / ՁԺԳ (1464թ.):

ԿԱՆԳՆԵՅԱԻ ԽԱՂԶՍ Ի [ԲԱՐԵԽ]ԱԻՍՈՒ
ԹԻԻՆ / ԸՆՈՐՀ / ԱՅ ՏՐ ԹՈՒՄԻՆ ՀՈԳՈ,
ԹՎԻՆ / ՁԺԳ (1464թ.):

Ծանոթություն. Արձանագրության մեջ վկայված տեր Թուման հիշատակված է թիվ 72 արձանագրությունում:

108. Խաչքար, դարպաս-միջանցքում, խաչաքանդակի շուրջը, մեկ տող: Թվականը փորագրված է հորիզոնական խաչաթևերից վերև.

ՄԲԻՉԲԱԽՄՍՐԸՌԻՍՐ
ԱԿԻԻՆՊՈՂՂՈՍԻՆ

ՄԲ ԽԱՂԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՏՐ ԸՈՍՍ / ԱԿԻՍԻՆ,
ՊՈՂՂՈՍԻՆ:

109. Վանքի արևմտյան հուշարձանախմբի դարպասի կամարի արևելյան մասում կառուցված մատռանման եկեղեցու արձանագիր շինաքարեր, որոնք հայտնաբերվել են դարպաս-միջանցքում:

ԵՍՏՐՌՐՄԵԼՆԻՆԵՑԵ —
ՍԱՀՄԱՆԵ ՑԻԻՐԱԻՆԶ ԱԾԱ
ԾՆԻՆՏԱԷ: ԳԻԿՐՄԱՏ Ա ԱԳ
ԲԿՈՒՓԱՄԵՆՑՅՈՒՆՆԱ ՌՆԵՆ
ՄԵՐԱԲՆՈՒՄԻԱԵԻԻՐԾՆՈՂԱ ՑՆ
ԼՆՏԻԱՆՔԻԹԵ ՄԲՈՒՍԻՆ: ՑԱՂԱՑԳԱՐ
ԻԹ 24

ԵՍ՝ ՏՐ ՈՒՐՊԵԼ ՍԻԻՆԵԼԱՅ ԵԼՊԻՍԿՈՊՈՍ, / ՍԱՀՄԱՆԵՑԻ Ի ՏԱՐԻՆ՝ ԶԱԼՍՏՈՒԱՅԾ / ԱԾ-ՆԻՆ ՏԱԻՆԻՆ: Գ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ, / : Բ: ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ՏԱԻՆԻՆ ԱՌՆԵՆ / ՄԵՐ ՄԱԻՐՆ՝ ՈՒՏԻԱ ԵՒ ԻԻՐ ԾՆՈՂԱՑՆ, / ՎԼԱՍՅՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԼԱՆՅ ՄԲ ՈՒԽՏԻՆ ՑԱՂԱՑ ՔԱՐՈ, / Ի ԹՎԻՅՆ 24 (1311թ.):

Գրչագրի վեցերորդ տողի առաջին բառը փորագրված է եղել ՎԱՄՆ (ՎՆ):

Ծանոթություն. Նորահայտ արձանագրությունը թերի է: Այնուամենայնիվ, այդ վիճակով էլ այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Արձանագրությունը փորագրված է Սյունյաց եպիսկոպոս Հովհաննես Օրբելի անունից՝ 1311թ.: Վերջինս Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի (1286–1303թթ.) հորեղբայր Իվանեի թոռն էր, Լիպարիտի և Նանայի որդին¹¹⁷: Ուսանել է Գլաձորի համալսարանում՝ աշակերտելով Եսայի Նչեցուն¹¹⁸: 1302թ. Ստ. Օրբելյանի առաջարկությամբ ընտրվել է Սյունյաց եպիսկոպոս և վերջինիս մահվանից հետո (1303թ.) զբաղեցրել նահանգի մետրոպոլիտական պաթոռը (1303–1324թթ.)¹¹⁹: Հովհաննես Օրբելի անվան հիշատակությամբ արձանագրություններ են պահպանվել Հերիերում¹²⁰, Արենիում¹²¹, Ամաղուի Նորավանքում¹²² և Ցաղաց քարում¹²³: 1988 թ. պեղումներով հայտնաբերված արձանագրությունը հաղորդում է եպիսկոպոսի կողմից պատարագներ սահմանելու մասին: Ուշագրավ է արձանագրության ՄԵՐ ՄԱԻՐՆ ՈՒՏԻԱ բանաձևը: Եթե ՈՒՏԻԱՆ ընդունենք իբրև անձնանուն, ապա անհասկանալի է մնում մետրոպոլիտի մոր անունը, որն աղբյուրներում հայտնի է Նանա կամ Աննա տարբերակներով:

110. Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան սյունաարահի հարավային սյունաշարի խաչաքանդակ քարերից մեկին, ստորին մասում, երկու տող.

ՎԱՍ ԱԿ
ԻՇԵ ԳԵԲ

ՎԱՍԱԿ Յ/ԻՇԵՑԷԲ:

Ծանոթություն. Խաչաքանդակը և վիմագրի տառաձևերը հուշում են, որ հիշատակագիրը X–XI դդ. է:

¹¹⁷ Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 193–227:
¹¹⁸ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 166:
¹¹⁹ Գ. Գրիգորյան, նշված աշխ., էջ 223–227:
¹²⁰ Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 60:
¹²¹ Նշվ. աշխ., էջ 29:
¹²² Նշվ. աշխ., էջ 223:
¹²³ Նշվ. աշխ., էջ 150:

111. Խաչքար, հորիզոնական խաչաթևերի ստորին մասում, միայն թվականը.

Զ Խ
7

ՋԽԴ (1495 թ.):

112. Սրբատաշ շինաքար, գավթում, կենտրոնում ունի մեծ խաչաքանդակ, որի չորս կողմում մեկական փոքր խաչեր են, մի եզրին, ութ տող.

ԿԱՆ
ԵԿԱԻ
ԽԷՎԻ
ՓՐԿՈՒ
ԹԻՆՈԳ
ՄՈՒՐ
ՍԲԱԻ
/// ՆԻ

ԿԱՆԿՆ/ԵՑԱԻ/ԽԱՂՉՍ Ի/ՓՐԿՈՒԹԻ/ԻՆ/Ն/ ՀՈԳՈՅ/ՄՈՒՐ/ԱՅՏ ԲԱԻ/...ՇԻ:

113. Խաչքարի ստորին մաս, գավթում, քիվին և խաչաքանդակի շուրջը.

ԿԱՆԿՆԵՑԱԻԽԱՂՉՍԻ ՓՐԿՈՒԹԻ
ՀՈԳՈՅԻ ԱԹԻՆԵԻ ԿԵՆԱԿՑԻՆԻ ԲՈՅԵ
ԹՎՊԿԲ ԼՄ ԻՆ

ԿԱՆԿՆԵՑԱԻ ԽԱՂՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ/ԻՆ/ ՀՈԳՈՅ ԴԱԻ/ԹԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԻԻ- ԲՈՅ՝ ԷԼԱՄԻՆ:/ ԹՎ/ԻՆ/ ՊԸԲ (1423 թ.): ՍԲ ՅՈՎ/ԱՆ/ԷՍ:

ՄՅ

ՈՎ

Ծանոթություն. Արձանագրությունը թերի է, գտնվել են հուշակոթողի բեկորված երկու մասերը: Ստորին մասը չի պահպանվել: Ս. Հովհաննեսը խաչքարի անունն է:

ԷՍ

114. Վանքի գերեզմանատանը գտնվող մի խաչքարի ստորին մասում, երկու տող.

ԷՍՍԱԲԻՍԿԱՆԲԸԵՑԻՍՈՒ
ԲԲՆՍԱԲԸՆԱԿԱՆ

ԵՄ՝ ՍԱՐԶԻՍ, ԿԱՆԶՆԵՑԻ ՍՈՒ/ՐԲ ԽԱՂՉՍ ԱԻԶՆԱԿԱՆ:

114. Վերջին տարիներին, վանքի Ս.Կարապետ և Ս.Նշան եկեղեցիների նորոգման աշխատանքներով պայմանավորված, հիշյալ կառույցների շրջակայքը մաքրելիս, հայտնաբերվել են մի քանի քանդակագարդ քարերի ու խաչքարերի բեկորներ և արձանագիր քարեր: Նորահայտ վիմագրերը Ս. Նշան եկեղեցու հարավային պատի տակ արտաքուստ բացված մի շարք հարթ ուղղանկյունաձև տապանաքարեր են, որոնցից մեկին պահպանվել է եռատող հիշատակագիր.

ԶՅՈՆՆԷՍ
 Բ Յ Մ
 ՅԻՇ :ՉԼԷ Թ

ԶՅՈՆՆԷՍ/ՔԱՎԱՆԱՅ//ՅԻՇԵՑԷՔ/
 :ՉԼ: (1281) ԹՎԻՆ:

115. Հուշակոթող, ի հայտ է եկել նույն եկեղեցու մաքրման աշխատանքների ժամանակ, վրան՝ հինգ տող.

Տ Թ Շ Դ Ե Ր
 ԿԱՆՈՒՆՅԱ
 ԻՏԱՅ ԲՊԱԿԼ
 ՈՍՅԻՇԵՅ
 ԵՔԻԲՍ *

ՀԱՅՈՑ] ԹՎԻՆ] ՇԴ (1055) ԵՐ, /ԿԱՏԱՐԵ-
 ՑԱ/Ի ՀԱՅՐ ՊԱԻՂ/ՈՍ, ՅԻՇԵՑ/ԵՔ Ի +:

Վանքի խաչքարային հիշատակագրություններում վկայված որոշ անուններ կարդում ենք նաև տապանագրերում: Կարելի է ենթադրել, որ նրանք վանքում որոշակի ավանդ են ունեցել, որոնց պատվին առանձին խաչքարեր են կանգնեցվել:

ՀՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐԸ

ԽԱՉՔԱՐԵՐԸ

Խաչքարերը միջնադարյան հայ քանդակագործական արվեստի դրսևորումներ են և ունեն վիթխարի ճանաչողական արժեք հայ ժողովրդի անցյալի, արվեստի ու քանդակագործության, ընկալումների ու պատկերացումների, մտածելակերպի ու դիտողականության բացահայտման առումով: Նրանք անցել են ծագման ու զարգացման տևական գործընթաց և որպես այդպիսիք մեծ տարածում ստացել հատկապես IX–X դդ.: Եթե հնագույն մենհիրները գերեզմանական կոթողներ էին, վիշապները՝ պաշտամունքային, ուրարտական կոթողները՝ հուշադրական, արտաշեսյանները՝ սահմանաքարեր և այլն, ապա խաչ-

քարերը, դառնալով քրիստոնեական հավատի կոթողի ամենատարածված ձևը, իրագործում էին վերոհիշյալ հուշակոթողների բոլոր գործառույթները: Հայ արվեստի գիտակ Լ. Դուռնովոն, խոսելով խաչքարերի դերի ու նշանակության մասին, գրում է, որ դրանք պատրաստվում էին պատվիրատուի համար՝ որպես վերջինիս կողմից զանազան աղոթքների իրականացման միջոց¹²⁴: Ինչպես իրավամբ նկատել են Լ. Դուռնովոն¹²⁵, Հ. Խալփախյանը և ուրիշները, հուշակոթողի մեծությունը և գեղարվեստական մշակումը կախված էին պատվիրատուի հատկացրած միջոցներից: Պատահական չէ, որ մինևույն ժամանակաշրջանում, նույն հուշարձանում հանդիպում

¹²⁴ Л. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, էջ 122–128:
¹²⁵ Նույն տեղում:

են ինչպես պարզ, այնպես էլ շատ բարդ, արվեստի կատարյալ նմուշ դարձած խաչքարեր: Դրանք կանգնեցվում էին գերեզմանատներում, վանքերի ու եկեղեցիների շրջակայքում, ագուցվում հոգևոր կառույցների որմերի մեջ: Դրվում էին նաև մենավոր խաչեր՝ բարձունքների վրա, ճանապարհների եզրին և այլն: Խաչքարերի վերը նշված գրեթե բոլոր կիրառություններն առկա են նաև Ցաղաց քար վանքում, որտեղ դրանց թիվը 200-ից ավելի է:

Ցաղաց քար վանքի տարածքում առկա են մի քանի գերեզմանատներ: Դրանցից ամենախոշորն արևելյան հուշարձանախմբի տարածքում է, որտեղ առկա են մեծ թվով խաչքարեր, տապալաքարեր, կոթողային այլ հուշարձաններ:

Հաջորդ գերեզմանոցը արևմտյան հուշարձանախմբի տարածքում է: Մի այլ գերեզմանատուն պահպանվել է արևմտյան հուշարձանախմբից դեպի հյուսիս-արևելք՝ շուրջ 100 մ հեռավորությամբ: Ցաղաց քարի նորաբաց երեք սյունասարահի, գավթի և եկեղեցու պեղված տարածքից հայտնաբերվել են հարյուրից ավելի, X–XVII դդ. բնորոշ քանդակներով, հաճախ թվագրված, զարդարուն և հիմնականում ամբողջական խաչքարեր: Դրանց մեծ մասն ունի արձանագրություններ՝ կանգնեցման տարեթվերի, աշխարհիկ և հոգոր գործիչների հիշատակությամբ: Շնորհիվ այդ հիշատակագրերի՝ հնարավոր է դառնում նշանակալից չափով ճշգրտել միաբանության վանահայրերի ցանկը, հայտնի են դառնում վանքի գործունեության հետ կապված մարդկանց անուններ: Վաղ խաչքարերի պսակն են կազմում վանական համալիրի արևելյան հուշարձանախմբի Ս. Նշան թաղակապ եկեղեցու արևմտյան ճակատին զետեղված երկու հսկայական խաչքարերը, որոնք իրավամբ կարող են դասվել հայկական միջնադարյան քանդակագործական արվեստի գլուխգործոցների շարքին: Այս հանգամանքը ևս հաստատում է, որ նշված ժամանակաշրջանը վանքի գործունեության առավել ակտիվ փուլերից է եղել¹²⁶:

Վերջին տարիների պեղումներով հայտնա-

բերված խաչքարերի մեջ առավել մեծ թիվ են կազմում XII–XIV դդ. թվագրվողները (աղյուսակ 17.3–4, 18): Դրանք կերտված են բազալտից, ունեն կառուցվածքային որոշակի հատկանիշներ և ուղղանկյուն-քառանկյուն մակերեսով քարեղեն տախտակներ են: Վերին մասում առաջ եկած քիվն աստիճանաբար առաջ է մղվում կոթողի ընդհանուր մակերեսից: Քանդակները դառնում են նրբագեղ: Ոճավորվում է կենտրոնական խաչաքանդակը և պարուրվում բազմազան քանդակների խիտ ցանցով: Գերիշխող են դառնում բուսական և երկրաչափական տարրերը, որոնք առանձնակի հմայք են հաղորդում կոթողներին:

Ցաղաց քարի այս շրջանի խաչքարերին բնորոշ է մի հետաքրքիր երևույթ: Այնքան մեծ է եղել X–XI դդ. ավանդական ձևերի ազդեցությունը, որ վարպետները հետագայում ևս չեն խուսափել դրանց կիրառումից: Դրա լավագույն նմուշներից է 1213 թ. Մմբատ քաջորդու հիշատակին կանգնեցված խաչքարը:

Անհամեմատ մեծ թիվ են կազմում XV–XVII դդ. խաչքարերը (աղյուսակ 19, 20, 21): Մրանք նախորդ փուլերի նույնատիպ հուշակոթողների համեմատ ավելի պարզ են, ընդ որում շատ հաճախ՝ անզարդ: Քանդակների ռելիեֆայնությունը հետզհետե պակասում է, դրանց մեծ մասն առանց պոչուկի է՝ ագուցված հուշարձանների որմերի մեջ: Թեև որմերի մեջ հուշակոթողների ագուցման ավանդույթը գալիս է զարգացած միջնադարից, սակայն հատկապես ուշ միջնադարում այն ստանում է բավական մեծ տարածում:

Ցաղաց քարի ուշ շրջանի խաչքարերում նկատվում է մի այլ երևույթ ևս: Փոքրանում են խաչքարերի չափերը՝ հաճախ հասնելով ընդամենը 1 մ բարձրության:

Ինչպես վերը նշեցինք՝ խաչքարերի մեծ մասն ունի հիշատակագրային արձանագրություններ: Կան նաև այնպիսիները, որոնք լրացնում են հայկական խաչքարերի Վայոց ձորի դպրոցների մասին մեր պատկերացումները, որի հենքի վրա էլ դրանք քննարկվում են սույն ուսումնասիրության մեջ:

¹²⁶ Հ. Պետրոսյան, Խաչքար. Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 115, 121–126:

ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԸ

Միջնադարյան Հայաստանի մեմորիալ հուշարձանների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում տապանաքարերը, որոնք ի հայտ են գալիս դեռևս անտիկ ժամանակներից: Ննջեցյալի գերեզմանը հուշակոթողով պսակելու գաղափարը Հայկական լեռնաշխարհում հնագույն ավանդույթներ ունի և աղերսվում է բրոնզի դարաշրջանի ամենավաղ փուլերի հետ: Հնագույն ժամանակներից սկսած՝ թաղումների տեղում կանգնեցվել են մենհիրներ կոչվող կոթողային հուշարձաններ: Մ.թ.ա. II–I հազարամյակներում թաղումներն ուղեկցվել են քարե բազմազան կոտրվածքով ու ֆալոս հուշակոթողներով¹²⁷: Բրոնզեդարյան Հայաստանի դամբարանային կառույցների ամենատարածված տարատեսակը քարաբլդային թաղումներն են, որոնց քարե խցերը ծածկվում էին մեկ և մեկից ավելի ծածկի սալերով: Դամբարանային կառույցների ծածկասալերի հետագա զարգացումը սալ-տապանաքարերն են, որոնց վաղնջական օրինակները հայտնի դարձան վերջին տարիներին անտիկ Շիրակավանի պեղումներով¹²⁸: Դրանք մինչև 1,5 մ երկարությամբ և 0,5 մ լայնությամբ ուղղանկյուն սալեր են, որոնք թվագրվում են մ.թ. II–III դդ.¹²⁹: Տապանաքարերի հետագա զարգացման արգասիքն են երկթեք տապանաքարերը, որոնք մեծ տարածում են ստանում արդեն V–VI դդ. սկսած¹³⁰: Մրանց մակերեսը երբեմն ծածկված է քանդակներով ու տապանագրերով¹³¹:

XIII–XV դդ. ի հայտ են գալիս խոյակերպ, ձիակերպ և սֆինքս հիշեցնող տապանաքարերը, որոնք (հատկապես վերջին երկուսը) տարածում չեն ստանում:

Ցաղաց քար վանքի տարածքում գտնվող գերեզմանատներում ամենատարածվածը հարթ տապանաքարն է: Դրանց թվագրված օրինակներն ընդգրկում են XIII–XVII դդ.: Այս տապանա-

քարերն անգարդ են (գեղաքանդակ հարթ տապանաքարերի հազվագյուտ օրինակներ են հայտնի Խամշի վանքից, Սպիտակավոր Ս. Աստվածածնի, Ամաղուի Նորավանքի հուշարձաններից): Որոշ օրինակների վրա կան մարդու գծանկար պատկերներ, հիմնական մասն ունի հիշատակագրային բովանդակությամբ արձանագրություններ, որոնք վերաբերում են թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ անձանց: Համեմատաբար փոքր թիվ են կազմում երկթեք տապանաքարերը, որոնք հիմնականում անգարդ են և առանց տապանագրերի: Վանքի տարածքում պահպանվել են ընդամենը մի քանի օրորոցաձև տապանաքարեր, որոնցից թվակիր է միայն մեկը՝ 1491 թ.:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում վանքի արևելյան գերեզմանատանը ուղղաձիգ դիրքով դրված գերեզմանական կոթողները (աղյուսակ 16, 25, 3–4): 1987 թ. պեղումների ժամանակ հետախուզական աշխատանքներ են իրականացվել նաև վանքի հուշարձանների արևելյան խմբի տարածքում: Այստեղ, ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայության, հայր Վարդիկի ղեկավարությամբ 1041 թ. շինարարական աշխատանքներն իրականացվել են մենաստանի առաջին սուրբ հայրերի հանգստարանում¹³²:

Ցաղաց քարի արևելյան հուշարձանախմբի Ս. Կարապետ եկեղեցուց հարավ, թեք լանջի վրա հայտնաբերվեցին IX–XVII դդ. հուշակոթողներ՝ խաչքարեր, տապանաքարեր և գերեզմանական ինքնատիպ կոթողներ: Վերջիններս բազալտից կերտված, մինչև 1 մ երկարությամբ, վերին մասում հղկված մակերեսով, ստորին մասում փոքրինչ նեղացող, պոչուկաձև վերջավորությամբ բազալտե սալեր են: Ստորին մասի սրածայր ձևը խոսում է այն մասին, որ այս կոթողները կանգնեցված են եղել ոչ թե պատվանդանին, այլ ուղղակի հողի մեջ: Այս հուշակոթողներն ուղղահայաց դիրքով կանգնեցված, յուրօրինակ տապանաքարեր են: Հուշակոթողի այս տիպը բավակա-

¹²⁷ С. Есаян, Скульптура древней Армении, Ереван, 1980.

¹²⁸ Ф. Тер-Мартirosов, Раскопки в Ширакаване, Археологические открытия 1982 года, Москва, 1984, стр. 445–446. Ф. Тер-Мартirosов, Г. Караханян, Раскопки поселения и некрополя античного Ширакавана, Центр арменоведческих исследований Ширака, научные труды, выпуск 1, Гюмри, 1998, стр. 17–30.

¹²⁹ Նշվ. աշխ., էջ 445:

¹³⁰ Գ. Միրիջանյան, Գիտարկումներ Հայաստանի վաղմիջնադարյան տապանաքարերի շուրջ, Հայագիտության հարցեր, N1, 2019, էջ 121–129: Գ. Միրիջանյան, Ս. Աղայան, Հայաստանի X–XIII դարերի տապանաքարերի տիպաբանությունը և առանձնահատկությունները, Հայագիտության հարցեր, N1, 2020, էջ 86–96:

¹³¹ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 244–246:

¹³² Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 340:

նին մեծ տարածում է ունեցել միջնադարյան Հայաստանում: Հայտնի են դրանց բազմաթիվ օրինակները (Մոզ¹³³, Հավուց թառ, Գառնի, Եղվարդ և այլն): Մակայն սրանց մեծագույն մասը թվագրվում է XIII–XIV դդ., մինչդեռ նորահայտ օրինակները շատ ավելի հին են (Շաղատ, Անգեղակոթ, Նուբարաշեն և այլն): Զարգացած միջնադարի գերեզմանատներում դրանք հանդիպում են և՛ առանձնակի կանգնած, և՛ տապանաքարերի մեկ կամ երկու եզրերին զետեղված: Այս գերեզմանական կոթողների մեզ հայտնի օրինակների հիմնական մասն անգարդ է: Ավելի վաղերի մեջ կան նաև այնպիսիները, որոնց մակերեսը հարդարված է վարդյակներով, փոքր խաչերով, հավերժությունը խորհրդանշող պատկերաքանդակներով: Ցաղաց քարում հայտնի դարձած օրինակները գուրկ են քանդակներից: Եթե մինչ այժմ հայտնի նմանատիպ կոթողների առկայությունը XIII–XVII դդ. տապանաքարերի կողքին հնարավորություն էին տալիս դրանք թվագրելու այդ ժամանակաշրջանով, ապա նորահայտներն ընդլայնում են դրանց ընդգրկման ժամանակագրական սահմանները:

Ցաղաց քար վանքում հայտնաբերված կոթողների զգալի մասի մակերեսը ծածկված է հիշատակագրային բովանդակության արձանագրություններով, որոնք թվագրված են IX–XII դդ.: Վերջիններս հուշակոթողի այս տարատեսակի մեզ հայտնի հնագույն նմուշներն են¹³⁴:

Վերը բերված ուղղահայաց դիրքով դրված և ինքնատիպ գերեզմանական կոթողները կիսով չափ թաղված են և հողից դուրս են ընդամենը 40–60 սմ: Հիշատակագրերից առաջ, երբեմն էլ վերջում, քանդակված են փոքր խաչեր: Մեծ մասի թվականները կոթողների փոքր մակերեսի պատճառով փորագրված են վերին հորիզոնական նիստին: Կոթողները թվագրված են 871, 986, 1041, 1047, 1048, 1051, 1060, 1081, 1147 թվականներով: Քանի որ մեր կողմից մաքրվել են միայն գետներես նշմարվող օրինակները, կարելի է դատել, որ այս «հին հայրերի գերեզմանոցը» զբաղեցրել է Ս. Կարապետ եկեղեցու ողջ հարավային լանջը: Ելնելով այս ուշագրավ հուշակոթողների սփռվածությունից՝ հարկ է եզրակացնել, որ ամբողջ լանջը պեղելու պարագայում դրանց թիվը կարող է հասնել տասնյակների:

ՏԱՂԱՑ ԶԱՐ ՎԱՆԵՐ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ցաղաց քարի պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը սակավ են, ինչը թույլ չի տալիս նյութի համեմատական քննություն կատարել, դասակարգել և թվագրել գտածոները: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում ներկայացնել այդ նյութերն ըստ ընդունված կարգի:

Երկաթե առարկաներ. Հայտնաբերված երկաթե իրերի, առարկաների մեջ մեծ թիվ են կազմում գամերը: Դրանք ուռուցիկ գլխիկով, տարբեր երկարության, դարբնի պատրաստած իրեր են, որոնց մեծ մասը գտնվել է հիմնականում պատահաբար բացված միջնադարյան թաղումներից: Հայտնաբերվել են նաև երկաթե մանգաղների մասեր, դանակի մի շերտ, ուղղանկյուն

կտրվածքով ճարմանդ: Երկաթե նյութերի մեջ առանձնանում է Ս. Հովհաննեսի մերձակայքից գտնված երկաթե խաչը, որի միայն վերին ուղղահայաց և հորիզոնական խաչաթևի մի մասն է պահպանվել: Դրանք կենտրոնում միացած են խաչապատկեր գլխիկ ունեցող դուրգամով: Խաչի թևերն ավարտվում են երկմաս վերջավորությամբ: Նմանատիպ խաչ է հայտնաբերվել Անբերդ ամրոցի պեղումների ժամանակ, 1963 թ., պարիսպների մոտ¹³⁵, որը թվագրվում է X–XI դդ.: Նմանատիպ երկաթե խաչեր հայտնաբերվել են նաև Հայաստանի այլ հնավայրերի պեղումների ժամանակ¹³⁶, որոնք ևս թվագրվում են նշված ժամանակով:

¹³³ Հ. Մելքոնյան, Մոզ ավանի հուշակոթողները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1902, II, էջ 95:

¹³⁴ Կոթողների արձանագրությունների լրիվ բովանդակությունը բերված է վանքի վիմագրերին նվիրված նախորդ գլխում:

¹³⁵ Ս. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 90–91:

¹³⁶ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի, III, 1949–1956 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1962, էջ 55: Ս. Հարու-

Խեցեղենը. Վանքի պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոների մեջ խեցեղենը համեմատաբար սակավաթիվ է: Ակներևաբար, այն պայմանավորված է կարճ ժամանակահատվածում համալիրի միայն մոնումենտալ հուշարձանները պեղելու հանգամանքով: Գտածոները խիստ բեկորված են, համեմատաբար մեծ թիվ է կազմում հասարակ, խոհանոցային խեցեղենը: Քանի որ վանական համալիրի որոշ կառույցներ ունեն աղյուսաշար հատակներ, գտածոների մեջ գերակշռում են հենց այս կարգի նյութերը: Ուշագրավ են կիսագլանի ձև ունեցող աղյուսե կղմինդրի բեկորը՝ արձանագրության հատվածով (աղյուսակ 30.3) և բավական մեծ կարասի շուրթն ու աղյուսը, որոնց վրա խաչագարդեր են դրոշմված (աղյուսակ 30.1–2): Մակավ են ապակյա իրերը, որոնք հիմնականում զանազան անոթների բեկորներ են: Գտնվել է ոսկրե վերադիր մեկ զարդ, որը հարդարված է խորադիր փոսրակներով և համակենտրոն շրջանակներով (աղյուսակ 32.5):

Եկեղեցական սպասքը. 1988թ. պեղումներով բացված ուղղանկյուն արսիդով կառույցի և վանքի Ս.Աստվածածին քառախորան եկեղեցու միջև, շուրջ 1,5 մ լայնությամբ միջանցքի հատվածը պեղելիս, բացվեց 1,3 մ խորությամբ հողի շահախով ամրացված հատակ: Այնտեղ հայտնաբերվել են պղնձե չորս խաչեր, կոթառ, փոքր զանգ և ջահի կամ աշտանակի մաս: Խաչերը խնամքով դրված էին իրար վրա, մյուս առարկաները՝ դրանց մոտ: Ենթադրելի է, որ հայտնաբերված սպասքը փաթաթված է եղել ինչ-որ կտորի մեջ, որը չի պահպանվել: Պեղումներով հայտնաբերված խաչերը չորսն են, որոնք պատրաստված են ձուլման եղանակով: Վերջիններս միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղի լավագույն նմուշներ են, որոնց բազմաթիվ օրինակներ հայտնի են Հայաստանի տարբեր հնավայրերից¹³⁷: Չուլեղուց հետո այդ խաչերը հարդարվել են հատիկաշար երիզներով, բուսական զարդամոտիվներով, խորադիր խաչերով, կետագարդերով և էպիկենտրոն շրջաններով, զոդված վերադիր կլոր և սլաքաձև զարդերով, քարեր ազու-

ցելու համար շրջանաձև, ձվածիր և ուղղանկյուն շրջանակներով:

Խաչերից առաջինի ստորին մասը չի պահպանվել (աղյուսակ 29): Դրա երկարությունը 18 սմ է, լայնությունը՝ 16 սմ: Խաչաթևերն ունեն ծայրերում շեշտված լայնացում, ավարտվում են երկուական շրջանաձև վերջավորություններով, իսկ խաչի մակերեսին հավասարաթև խաչեր են քանդակված: Խաչաթևերին՝ խորադիր մակերեսների մեջ, դրվագված են բուսական զարդագոտիներ: Խաչի կենտրոնում և թևերին գրեթե գնդաձև հարթ մակերեսներ կան, որոնք նախատեսված են եղել քարեր ազուցելու շրջանակներն ամրացնելու համար¹³⁸:

Հայտնաբերված երկրորդ խաչը ևս պատրաստված է ձուլման եղանակով (աղյուսակ 28), որի ստորին խաչաթևը և ելուստների մի մասը չեն պահպանվել: Խաչի պահպանված երկարությունը 14 սմ, լայնությունը՝ 18,5 սմ է: Խաչաթևերն ունեն շեշտված լայնացում, ավարտվում են եռաթև երկատումներ ունեցող ելուստներով, որոնք խաչաթևերից ձգված հիմքերով ստեղծում են խաչի պատկերներ: Սրանց կենտրոնում զույգ խորադիր շրջաններ են: Խաչաթևերին խորադիր մակերեսների մեջ դրվագված են բուսական զարդերի գոտիներ: Խաչի կենտրոնում և թևերին ամրացված են եղել ձվածիր շրջանակներ՝ կիսաթանկարժեք քարեր ազուցելու համար: Քարերից պահպանվել են միայն հորիզոնական խաչաթևերինը, որոնցից մեկին սարդիոն է ազուցված:

Հայտնաբերված երրորդ խաչը գրեթե ամբողջական է (աղյուսակ 27), դրա երկարությունը 21,5 սմ է, լայնությունը՝ 14 սմ: Խաչաթևերն ունեն շեշտված լայնացում, ավարտվում են եռամաս երկատումներով և դրանց միջև սլաքաձև ելուստներով: Փոքր կիսագնդաձև ելուստներ կան նաև խաչաթևերի միջնամասերի երկու կողմերում: Ելուստները հարդարված են պղնձե վերադիր կիսագնդերով, որոնց վրա ամրացվածները կենտրոնում փոսրակներ ունեն: Խաչաթևերը հարդարված են կետագիծ զարդերիզներով, համակենտրոն շրջաններով, վերադիր սլաքաձև և գնդաձև զարդերով: Պահպանվել են քարեր

¹³⁷ Թյունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 90–93: Հ. Պետրոսյան, Գաննի IX–XIV դարերում, Երևան, 1988, էջ 41:

¹³⁸ Ն. Հակոբյան, Հայաստանի գեղարվեստական մետաղը IX–XIII դդ., Երևան, 1981, էջ 32–36:

¹³⁸ A. Grigoryan, D. Mirijanyan, The excavations of Makravank, Aramazd. Armenian journal of Near Eastern Studies, vol. XIV, issue 1–2, 2020, Oxford, p. 246–267.

ագուցելու շրջանակները, որոնցից կենտրոնինը՝ ձվածիր, խաչաթևերինը՝ ուղղանկյունաձև: Հորիզոնական խաչաթևերից մեկում պահպանված սարդիոնե քարին կա արաբերեն արձանագրություն՝ *بلى نسحلا دمحم*: Գիրը փորագրված է Քուֆի տառատեսակի նմանակ անկյունային գրով: Պահպանվել է միայն երկու տողը, այն էլ՝ թերի վիճակում: Վերջինս վերևից և երկու կողմից կտրվել է շրջանակում ագուցելու համար: Քանի որ արձանագրությունը շրջագիր չէ, այս պարագան հիմք է տալիս եզրակացնելու, որ այն կնիք չէ, այլ զարդ-ամուլետ: Արձանագրությունից վերծանվում են շիա դավանանքի մարգարեներ Մուհամմադի և Ալի Հասանի (կամ Ալ-Հուսեյնի) անունները: Սա եզրակացնել է տալիս, որ քարը իրանական հմայիլ-թալիսմանի մաս է: Խաչի ստորին ուղղահայաց թևին կա կոթառն ամրացնելու համար անցք՝ զոդման հետքերով:

1988թ. պեղումներով հայտնաբերված չորրորդ խաչը ևս գրեթե ամբողջական է (չեն պահպանվել խաչաթևերի երեք ելուստները միայն) (աղյուսակ 26): Խաչի ամբողջ մակերեսը ծածկված է խորադիր համակենտրոն շրջաններով: Պահպանվել են քարեր ագուցելու համար ամրացված շրջանակները, որոնցից կենտրոնինը ուղղանկյուն-քառանկյուն է, խաչաթևերինը՝ սլաքաձև: Մեկի մեջ սլաքաձև ապակի է ագուցված: Խաչի ստորին մասում ամրացված է երկաթե կոթառ: Խաչի երկարությունը կոթառով 26,5 սմ է, լայնությունը՝ 12,5 սմ¹³⁹:

Ուշադրության է արժանի 10,5 սմ բարձրությամբ և 8 սմ ստորին մասի տրամագծով ձուլածո, հարթ մակերեսով զանգակը (աղյուսակ 31.3): Ստորին մասում այն ունի զույգ հորիզոնական կիսագլանաձև գոտիներ, իսկ վերին մասում ուղղանկյուն հիմքով տափակ ելուստ է, որը կախելու համար անցք ունի: Գտնվել է նաև վերին մասում զույգ հորիզոնական գոտիներով զանգակի լեզվակ և պղնձե կախիկ, որը վերին մասում ունի հորիզոնական գոտիներ ու կախելու համար անցք, որից շղթայի մի օղակ է կախված:

Ուշագրավ է վերադիր ձուլածո ուղղանկյուն զարդը, որի չորս անկյունները հարդարված են եռանաս ելուստներով: Պղնձե իրերի մեջ հատկանշական են 13 սմ երկարությամբ սնամեջ կոթառը, փոքրիկ զանգակը և կլորավուն օղը: Հայտնաբերված իրերի մեջ առանձնանում են բարակ թիթեղից պատրաստված վերադիր զարդը, ապարանջանը և այլ իրեր: Ապարանջանն ունի 2 սմ լայնություն և 19 սմ երկարություն, մակերեսին զիզգազ զարդեր են: Երկու եզրերին արված են կլորավուն պտուտակներ, որոնցով այն միացել է ինչ-որ իրի, հավանաբար՝ մասանց պահարանի:

Գտածոներից հետաքրքիր է պղնձե ջահի կամ աշտանակի ձուլածո բեկորը, որը մշակված է սրտաձև և շրջան կազմող զարդերով: Ներսի կողմից այն ունի ձուլածո կախիկ: Միջնադարյան ջահեր են հայտնաբերվել Դվինի և Անիի պեղումների ժամանակ¹⁴⁰: Ցաղաց քարի գտածոների է, և դժվար է հստակ որոշել դրա պատկանելությունը (աղյուսակ 31.1): Այն թերևս ջահի շրջանաձև հիմքի մաս է, որի անցքերում ագուցվել են ապակե դամպարներ: Նույնատիպ երկու ջահ հայտնաբերվել է Իսրայելում: Այն շրջանաձև է, շղթաներով կախված է եղել առաստաղից, իսկ անցքերի մեջ ապակյա դամպարներ են դրվել, որտեղ կրակ է վառվել¹⁴¹:

Ցաղաց քարի գտածոների մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում կնիքը, որը 12 սմ երկարությամբ, 1,3 սմ տրամագիծ ունեցող հիմքով մի բրոնզաձույլ, ողորկ ձող է, որը վերին մասում ավարտվում է գլանաձև հորիզոնական գոտիով և դրանից վեր՝ կնքելու հատվածով: Այն կազմված է իրար դիմաց զույգ կիսասֆերիկ նշաններից: Կնիքը վերին զույգ գոտիների միջև ունի սնամեջ անցք՝ հավանաբար թելով կախելու համար: Ենթադրելի է, որ այս իրը կարող է նաև փոքրիկ զանգակի լեզվակ լինել (աղյուսակ 31.1):

Վերջին տարիներին Ելփին գյուղի մերձակա մատուռից քիչ հեռու, Երևան-Եղեգնաձոր ճանապարհը լայնացնելու ժամանակ, հայտնաբեր-

¹³⁹ Նմանատիպ կոթառով խաչերը կոչվում էին ձեռաց խաչեր և օգտագործվում էին եկեղեցական արարողությունների ժամանակ, իսկ եթե կոթառ չէին ունենում, դրվում էին եկեղեցիների խորաններում և կոչվում էին խորանի կամ սեղանի խաչեր: Տե՛ս Ն. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 33–34:

¹⁴⁰ Ն. Հակոբյան, Հայաստանի գեղարվեստական մետաղը IX–XIII դդ., էջ 26: Դրանք շրջանաձև առարկաներ են և շղթաներով կախվել են առաստաղից: Մակերեսներին իրի մեծությունից կախված ունեն տարբեր քանակի ճրագակալ-անցքեր և ագուցվել են ճրագաթասերը (տե՛ս Գ. արք. Հովսեփեան, Հնության նշխարներ, Տարագ, 1909, էջ 8):

¹⁴¹ Mariusz Burdajewicz, Glass finds from the north-west church complex, Hippos-Sussita / Seventh session of excavations, July 2006, Zinman institute of archeology university of Haifa, 2006, p. 127–140, p. 132, fig. 2 A.

վել է բրոնզե մի ձեռաց խաչ՝ առանց հորիզոնական խաչաթևերից մեկի և կոթառի մի մասի: Խաչի պահպանված երկարությունը 31 սմ է: Այն ունի զույգ հյուսածո զարդերիզներ: Կենտրոնում խաչված Քրիստոսն է՝ գանված քաղկեդոնիկ խաչին: Խաչի այս պատկերը նման է Վայոց ձորի Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքի 1321 թ. կառուցված եկեղեցու արևելյան որմի խաչա-

քանդակին: Խաչաթևերի ծայրերն ավարտվում են զարդերիզ ունեցող շրջանաձև վահանակներով, որոնց վրա չորս ավետարանիչների կիսանդրիներ են: Խաչաթևերին կան նաև կլորավուն և սլաքաձև վերադիր զարդեր: Ելնելով խաչի պատրաստման տեխնիկայից և զուգահեռ նյութերից՝ այն կարելի է թվագրել XIV–XV դդ.:

ՅԱՂԱՑ ԲԱՐ ՎԱՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՎՎԱԾՔՆԵՐԸ

Ինչպես գիտենք, Ցաղաց քարը Սյունյաց աշխարհի ամենանշանավոր հոգևոր կենտրոններից էր և հայտնի էր հարյուրավոր տարիներ՝ X դ. մինչև XVI–XVII դդ.: XIII դ., երբ Օրբելյան ու Պոռոշյան նշանավոր իշխանական տների գերիշխանության ժամանակ (այս շրջանում Սյունիքում հիշատակվում են ևս մի քանի հայտնի իշխանական տներ՝ Աղթամարյաններ, Շահունեցիներ, Մահևանյաններ և այլն), նահանգը հասել էր իր հզորության գագաթնակետին, Ցաղաց քարը Տաթևի և Նորավանքի հետ միասին համարվում էր Սյունիքի երեք ավագագույն, առաջնորդական աթոռներից մեկը: Իզուր չէ, որ Ցաղաց քարի միաբանության առաջնորդները հաճախ հասել են եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի հոգևոր բարձր աստիճանի:

Այսպես, 1483 թ. Ալեգսանդոս արեղայի կողմից ընդօրինակված Տոնացույցի հիշատակարանում կարդում ենք. «...գրեցաւ առաջնորդութեան սուրբ ուխտիս Գրիգոր եպիսկոպոսին»¹⁴²: 1492 թ. Խաչատուր քահանայի ընդօրինակած Ավետարանում Գրիգորն արդեն վկայված է իբրև «...առոտս փառաւոր և մեծագգի արհեպիսկոպոսիս տէր Գրիգորի»¹⁴³: Կարծում ենք, որ վերը բերված հիշատակարաններում վկայված է միևնույն վանահայրը: Վանքի Ս. Հովհաննես եկեղեցու գավթի պեղումներով հայտնաբերված խաչքարերից

մեկի ստորին մասում փորագրված արձանագրության մեջ հիշատակվում է վանքի ևս մի բարձրաստիճան առաջնորդ՝ Ստեփանոս եպիսկոպոսը՝ մահացած 1555 թ.:

Ցաղաց քար վանքը, իբրև առաջնորդական աթոռ և երկրամասի խոշորագույն հոգևոր կենտրոններից մեկը, անշուշտ պետք է նաև խոշոր սեփականատեր լիներ, որի հիմնական աղբյուրը վանքերին տրվող նվիրատվություններն էին: Այս մասին հիշատակող մատենագրական վկայություններն ու վիմական արձանագրությունները փաստում են, որ Ցաղաց քարը ևս, այլ խոշոր վանքերի նման, վանական միաբանության նյութական կարիքները բավարարելու համար ուներ իր սեփական հասութաբեր հաստատությունները: Դրանք ոչ միայն արտադրական կառույցներ էին (ձիթհան, ջրաղաց, հնձան), այլև անշարժ ու շարժական գույք (գյուղեր, արտեր, այգիներ, մարզեր) և եկեղեցական սպասք (ընծաներ, իրեր, Տերունական Ս. նշան, արծաթի խաչ, գրակալներ)¹⁴⁴:

Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Տաթևի վանքի մասին, նշում է, որ այստեղ կային բազմաթիվ գործատներ՝ միաբանության կարիքները բավարարելու համար: Այսօրինակ մի գործատուն՝ մետաղաձուլական արհեստանոց, մենք պեղել ենք տարիներ առաջ Վահանավանքում,

¹⁴² ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 41:

¹⁴³ Նշվ. աշխ., էջ 186: Հ. Պետրոսյան, Գանսին IX–XIV դարերում, Երևան, 1988, էջ 41:

¹⁴⁴ Հայոց եկեղեցուն նվիրատվություններ կատարելը սահմանված էր ի սկզբանե: Այսպես, Սահակ Պարթևի սահմանած կանոններում կարդում ենք. «Իշխանք զգեաղոս և զդաստակերոս և զգանձս ոսկոյ և արծաթոյ, այլք յանդատանաց և ի պաճարաց և ի հանդերձից պատուականաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէտք յաղագս փրկելեանց և ծնաղաց և զվախճանելոց հատուցանել հատուցմունս, զարդ և պայծառութիւն կազմելով հոգոց և մարմնոց...»: Կանոնագիրք հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 412:

որը կապված էր գեղարվեստական մետաղի արտադրության հետ¹⁴⁵: Այսպիսի հաստատություններ ունեցել է անշուշտ նաև Յաղաց քարը, ինչի մասին են վկայում պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական գտածոները:

Յաղաց քարի նվիրատվական արձանագրություններից ամենահինը փորագրված է երկհարկ եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին: Այն վանքի առաջնորդ հայր Վարդիկի անունից է: Վերջինս վանքին է նվիրել «...գԲվեա մարզ եւ Մեղաի այգին եւ այլ շատ իրք...», որի համար միաբանները սահմանել են տասնհինգ օր ժամ Վարդավառի տոնին պատարագ մատուցել Վարդիկի և իր հոր՝ Զաքարեի հոգու փրկության համար¹⁴⁶:

Նվիրատվական բովանդակությամբ հաջորդ արձանագրությունը վանքի Ս. Հովհաննես եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա է: Այն վկայում է վանքին երկու այգի նվիրելու մասին¹⁴⁷: Համաձայն այս վիմագրի՝ 1211թ. Ոստինք գյուղի տեր Գրիգորը՝ Սմբատի որդին, «Թվ: ՈԿ: եւ Գրիգոր, որդի սմպասա, ոստնի տեր, գերկու դոնիս տնկեցի եւ ետու ի սբ Յովանես...», փոխարենը ստանալով տասներկու օր ժամ պատարագ¹⁴⁸: Այս արձանագրության առաջին հրատարակողներից Քաջբերունին «Ոստնի տեր» արտահայտությունը իրավամբ մեկնաբանել է որպես Ոստինք գյուղի տեր՝ Շատին գյուղից Եղեգիս տանող ճանապարհի վրա գտնվող համանուն գյուղատեղի անունով¹⁴⁹: Արձանագրության մեզ հետաքրքրող հատվածը քննարկել է նաև վիմագրագետ Ս. Ավագյանը¹⁵⁰: Վերջինս, անդրադառնալով Յաղաց քարի արձանագրությանը և տերմինի՝ «ոստնի» արտահայտությունն իբրև սեռականի ուղիղ ձև, Հ. Աճառյանի և Ս. Մալխայանցի բառարանների հիմամբ այն համարում է «չոր, ցամաք, անջրդի, միայն անձրևի ջրով ջրվող

հողամաս»: Վիմագրագետը չի բացառում նաև տերմինն իբրև տեղանուն համարելու տարբերակը¹⁵¹: Մենք ևս հակված ենք այս տարբերակին:

Վանքի Ս. Կարապետ եկեղեցու հյուսիսային որմին փորագրված է եղել մի արձանագրություն, որն այսօր խիստ եղծված է: Նրա առաջին երկու տողերի պահպանված հատվածներից տեղեկանում ենք, որ այն փորագրվել է «...ի թագաւորութեն վրաց Թամարին եւ մեծ իշխանին Զաքարեի...»¹⁵²: Արձանագրությունը փորագրված է Վասակ Խաղբակյան իշխանի անունից՝ XIII դ. սկզբին: Համաձայն վիմագրի՝ Վասակ իշխանը Եղեգաց գավառից մի այգի է նվիրել վանքին:

Ս. Կարապետի մուտքի վերին մասում փորագրված մի այլ արձանագրության համաձայն՝ Լիպարիտ Օրբելյանի կինը՝ իշխանուհի Ասփան, վանքին է նվիրել «...Յարտեբոյն զմեծ արտ իւր սահմանաւք ի սբ Յովանես որ իմ հայրենիք էր ի հնուց»¹⁵³: Քանի որ Ասփա իշխանուհին մահացել է 1263թ., ուստի արձանագրությունը պետք է թվագրել XIII դ. կեսով:

Նվիրատվական բովանդակությամբ հաջորդ արձանագրությունը փորագրված է Ս. Կարապետ եկեղեցու հարավային պատին, ներքուստ: Համաձայն այս նվիրագրի՝ Սյունյաց մեծ իշխան Տարսայիճ Օրբելյանը վանքին է նվիրել Գեղարքունիքի Գառնակեր գյուղը և մի այգի Մճոկաձոր գյուղից. «...տվաք ի սբ ուխտս Յաղաց Քարո ի հայրենեցն մերոց ի Գեղարքունի զգեղն Գառնակեր եւ ի Մճոկաձոր զմեր ձեռնատունկ այգին...»¹⁵⁴: Այս արձանագրության բովանդակությանը գրեթե նույնությամբ հանդիպում ենք պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մոտ: Սյունյաց տան պատմիչը վկայում է. «...եւ ի վանն Յաղացքարոյ գիւղ, ի Գեղարքունի զԳառնակերն. և այգի մի ի Մճոկակայ ձորի. և գրէ ինքեան արձան ի վերայ սրբոյ Կարապետին...»¹⁵⁵,

¹⁴⁵ Հ. Մելքոնյան, Վահանավանքի մետաղաձուլական հնոցները, երիտասարդ գիտնականների կոնֆերանս, Երևան, 1980, էջ 12–13: Տե՛ս նաև՝ Գ. Գրիգորյան, Վահանավանք, պատմահնագիտական ուսումնասիրություն, Երևան, 2007, էջ 34–36:

¹⁴⁶ Նշվ. աշխ., էջ 152:

¹⁴⁷ Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 142:

¹⁴⁸ Նույն տեղում:

¹⁴⁹ Քաջբերունի, Ճանապարհորդական նկատողություններ, Երևան, 2003, էջ 208, 214:

¹⁵⁰ Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978, էջ 261–262:

¹⁵¹ Նշվ. աշխ., էջ 262:

¹⁵² Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 148:

¹⁵³ Նշվ. աշխ., էջ 148–149:

¹⁵⁴ Նշվ. աշխ., էջ 149:

¹⁵⁵ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 424–425:

ապա նաև ավելացնում, որ «նորոգել և բազում եկեղեցիս խախտեալս և հնացեալս»¹⁵⁶: Վանքի նվիրատուների ցուցակում հիշատակվում է նաև Եղեգիսի մեծահարուստներից մեկը՝ Ալամը, որը Ցաղաց քարին է նվիրել «...միաբանեցայ սբ ուխտիս ընձաւիք...»¹⁵⁷: Թերևս այս նույն Ալամն է հիշատակված եկեղեցու արևելյան կողմում գտնվող տապանաքարերից մեկին՝ «այս է հանգիստ աղախնոյն Ալամա» վերտառությամբ¹⁵⁸:

Նույն եկեղեցու հարավային որմին ներքուստ փորագրված անթվակիր արձանագրության համաձայն՝ ոմն Մարտիրոս իր «Եղեգեց հայրէնի հողն զՓորատապա» նվիրել է վանքի Ս. Հովհաննես եկեղեցուն¹⁵⁹: Նախորդի կողքին փորագրված մի այլ արձանագրության համաձայն՝ Գեղի որդի Գերգը վանքին է նվիրել իր սեփական խաղողի այգին՝ «իգին»¹⁶⁰:

Հաջորդ նվիրատվական արձանագրությունը փորագրված է Ս. Աստվածածին եկեղեցու հարավային սյունաքարի արևելյան պատին, ներքուստ: Համաձայն այս ուշագրավ տեքստի՝ ոմն Վարդան վանքին է նվիրել իր «տերունե սբ նշանն եւ գրակալք», որի համար միաբանները սահմանել են Ս. Գևորգ գորավարի տոնին երկու պատարագ մատուցել նվիրատուին՝ հոգու փրկության համար:

Վանական համալիրի արևմտյան խմբի կամարակապ դարպասի որմերին պահպանվել են մի քանի չափազանց հետաքրքիր արձանագրություններ, որոնք լրացնում են Ցաղաց քարի սեփական կավածքների վերաբերյալ տվյալները: Սրանցից առաջինը դարպասի հյուսիսային պատին է և բաղկացած է տասը տողից: Գրված է Պողոսյան տոհմի նշանավոր իշխան Էաչիի անունից, 1317 թ.: Արձանագրության համաձայն՝ «միաբանեցայ սբ ուխտիս Ցաղաց քարո եւ ետու յիմ հայրենեաց ի Սրկղունս զմեր ձեռնատունկ այգին նորակերտ իւր ջրովն», մեծ իշխանը վանքին է նվիրել իր սեփական ձեռնատունկ այգին

Սրկղունքից, իր ջրով, որի համար վանքի միաբանները պարտավորվել են տարին չորս պատարագ մատուցել Դավթի և Հակոբի տոնին՝ նվիրատուի կնոջ և ծնողների համար¹⁶¹: Ուշագրավ է, որ պատարագներ սահմանողը վանքի միաբանների հետ միասին Սյունիքի հոգևոր առաջնորդ, մետրոպոլիտ Հովհաննես Օրբելն է, որին նվիրատուն բնորոշում է «մեր եղբայրն» հորջորջմամբ¹⁶²: Խնդրին անդրադարձել է Ա. Մկրտչյանը, որը, հիմնվելով Նոր Ջուղայում պահվող 1300 թ. մի Ավետարանի հիշատակարանի վրա, գրում է, որ Էաչի Պողոսյանն ու Հովհաննես Օրբելը երկու քրոջ որդիներ են¹⁶³: Այստեղից էլ բխում է իր մորաքրոջ որդուն «մեր եղբայր» անվանելու իրողությունը: Իսկ պատարագները ոչ թե վանահոր, այլ մետրոպոլիտի կողմից սահմանելու իրողությունը կարող է ունենալ իր բացատրությունը: Թերևս Էաչի մեծ իշխանը վանք է այցելել Հովհաննես Օրբելի հետ, և վերջինս ավագության սկզբունքով սահմանել է պատարագների վճիռը:

Հաջորդ արձանագրությունը նախորդի կողքին է և փորագրվել է 1367 թ.: Համաձայն այս չափազանց հետաքրքիր վկայագրի՝ Մամսոնի որդի ոմն Լիանոս և յուր կինը՝ Արգու խաթունը, իրենց Մամսոն որդուն թաղել են վանքում. «...մեք էլ գերեզման հատաք, մատաղ արարաք...», ապա՝ «եյք մեր առ ՔՍ հրեշտակարնակ ՄԲ ուխտս Ցաղան քար մեծ պարոնաց հրամանաւ Արտաբինեցիք Մուխի արծախեցին ամէն հարկէ ազատ Սիրկանց այգին գինն Բուղա թուրքին պարտքն տվին: Գեղո տղէքն գերի թափեցին, այգիս չարէքն իմ եղբարն տվաք :գ: չարէքս :ա: իմ հոգոյս :ա: Արուզ խաթունին հոգոյն :ա: Մամսոնա հոգոյն տվաք ի ՄԲ Հովանէս...»: Ի պատասխան այս ամենի՝ վանքի առաջնորդ Ներսեսը և մյուս միաբանները պարտավորվել են յուրաքանչյուր տարի պատարագ մատուցել նվիրատուների և իրենց ծնողների հոգու փրկության համար:

¹⁵⁶ Նշվ. աշխ., էջ 425:

¹⁵⁷ Գիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 150:

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Նշվ. աշխ., էջ 152-153:

¹⁶⁰ Նշվ. աշխ., էջ 153:

¹⁶¹ Գիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 143:

¹⁶² Նույն տեղում:

¹⁶³ Ա. եպ. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում, Երևան, 2013, էջ 90-95:

Վանքի Ս. Հովհաննես եկեղեցու գավթի պեղումների ժամանակ հայտնաբերված մի վիմագրի համաձայն, Եղեգիսի մեծատուններից մեկի՝ Սևադայի դուստր Մաման նորոգել է եկեղեցին և մի արծաթե խաչ նվիրել. «...ին արդեամբք նորոգեցի զեկեղեցիս եվ զին արծաթի խաչն այլ ետու...»: Ի պատասխան, միաբանները սահմանել են յուրաքանչյուր տարի հինգ ժամ պատարագ մատուցել նվիրատուի հոր հոգու փրկության համար:

Ինչպես վերը տեսանք, վանքին տրված նվիրատվությունները խիստ բազմազան են՝ բնակավայր, հողեր ու այգիներ, արտադրական կառույցներ, զանազան հասութաբեր հաստատություններ, եկեղեցական սպասք և այլն: Հայտնի է, որ վանքերի հիմնադրման ժամանակ մեկենասները նորահաստատ միաբանությունների տնտեսական կարիքները հոգալու համար զանազան նվիրատվություններ էին կատարում, որի արդյունքում դրանք աստիճանաբար վերածվում էին խոշոր սեփականատիրական հաստատությունների¹⁶⁴: Տվյալ դեպքում, բացի Գեղարքունիքի Գառնակեր գյուղից¹⁶⁵, մեզ հայտնի չէ Ցաղաց քարին պատկանող այլ բնակավայր, մինչդեռ, ինչպես վերը նշվեց, միաբանությանը պատկանող սեփականությունը հիմնականում գոյանում էր նվիրատվություններով:

Սյունիքի վանական կալվածատիրությանը նվիրված իր խիստ շահեկան աշխատության մեջ վիմագրագետ Գր. Գրիգորյանը, հիմք ընդունելով նախորդ ուսումնասիրողների դիտարկումները¹⁶⁶, առանձնացնում է վանական հաստատությունների սեփականատիրության երկու տարբերակ¹⁶⁷: Առաջինը տերունական, եպիսկոպոսանիստ վանքերն էին: Մրանք հիմնականում հոգևոր թեմերի կենտրոններն էին, և, որպես այդպիսիք, ունեին մեծ սեփականատիրական կալվածքներ: Երկրորդը սովորական վանքերն էին, որոնք չունեին մեծ կալվածքներ և իրենց տնտեսությունը վարում էին սեփական միջոցներով: Ցաղաց քարը Սյունիքի այս կարգի վանքերից մեկն էր, թեև XIII–XIV դդ., երբ Օրբելյան ու Պոռշյան տոհ-

մերի իշխանապետության պայմաններում Սյունիքը հասել էր իր հզորության գագաթնակետին, ծաղկում էր ապրում: Այն, ըստ Եսայի Նչեցու, Տաթևի և Նորավանքի հետ, Սյունիքի երեք ավագագույն, առաջնորդական աթոռներից մեկն էր: Սյունյաց վանքերի մեջ Ցաղաց քարին կարևոր տեղ հատկացնելու մասին կարդում ենք նաև նահանգի հոգևոր առաջնորդի պատմության էջերում: Ստեփանոս Օրբելյանը Կիլիկիայում վարդապետական աստիճան ստանալուց հետո՝ 1287 թ., վերադառնում է հայրենիք և ձեռնամուխ լինում Սյունյաց եպիսկոպոսական աթոռները միավորելուն՝ իր թիկունքին ունենալով Տարսայիձ մեծ իշխանի հովանավորությունը: Օրբելյանը Արդուն խանին է ներկայացնում Տարսայիձի հրամանով սիգլը կազմված Սյունիքի հոգևոր թեմին պատկանող վանական հաստատությունների ցուցակը, ըստ որի՝ «Տարսայիձը ժառանգութեան բաժին էր հանեալ մեզ զվանորայսն իւրոյ իշխանութեանն՝ զՏաթև, զՆորավանս, զՑաղաց քար, զԱրատես և զայլսն ամենայն»¹⁶⁸: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս Ցաղաց քարը երկու եպիսկոպոսանիստ աթոռներից հետո երրորդն է: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ցաղաց քար վանքը Սյունիքի առավել հոչակավոր հոգևոր հաստատություններից էր: Նրա կազմում կային առնվազն վեց եկեղեցի, երեք այունաարահ, գավիթ, գրատուն, տնտեսական և բնակելի բազմաթիվ շինություններ: Վանքի արևմտյան հուշարձանախմբի տարբեր կողմերում պահպանվել են բազալտի զանգվածեղ քարերով շարված պարսպապատի մնացորդները, որոնց կցակառուցված է տնտեսական շինությունների զգալի մասը:

Վանական համալիրի գլխավոր՝ արևմտյան խմբի հյուսիսային կողմում պահպանվել են վանքի ձիթհանի մնացորդները: Այն գտնվում է Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմի այունաարահից հյուսիս՝ հաստահեղույս պատերով շրջափակված բավական ընդարձակ մի հարթության վրա: Իրար կողքի պահպանվել են ձիթհանի երկու աղացքարերը: Անմիջապես վանքի տարածքում, եկեղեցիների մերձակայքում ձիթ-

¹⁶⁴ Գ. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը, էջ 63–117:

¹⁶⁵ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 424–425: Դիվան հայ վիմագրության, պրակ III, էջ 149: Չի բացառվում, որ վանքապատկան գյուղերից են եղել նաև Արտաբույնք և Ոստինք գյուղերը:

¹⁶⁶ Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրաւունքը, հ. Բ, Շուշի, էջ 62:

¹⁶⁷ Գ. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը, էջ 62:

¹⁶⁸ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 481:

հանի գտնվելը փաստում է այն մասին, որ արտադրական այս հաստատությունը հիմնարկվել է միաբանության առօրյա կարիքները բավարարելու համար:

Ցաղաց քարից շուրջ 500 մ հյուսիս-արևելք պահպանվել էր վանքապատկան այգիներից մեկը, որն ունի հյուսիսից հարավ ձգվող ուղղանկյուն մակերես և շուրջ 3 հա տարածք: Պահպանվել է այգու ցանկապատի զգալի հատվածը, որը միջին մեծությամբ բազալտի քարերով շարված

ոչ շատ կանոնավոր պատաշար է: Այգին վերացավ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, անտառահատման ճգնաժամի տարիներին: Այստեղ պահպանված և վաղուց վայրիացած ծառերից կարելի է դատել, որ այս վանքապատկան տարածքը եղել է խնձորի այգի: Մինչ օրս պահպանվել են այգու ռոտոգման առուների զգալի հատվածները: Այգին ունեցել է արևահայաց դիրք և, ակներևաբար, բարձր բերքատվություն:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ՑԱՂԱՑ ԶԱՐԻ ՎԱՆԱՅԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԸ

Միջնադարյան հայ մատենագիրների (Ասողիկ, Ստեփանոս Օրբելյան) երկերում, Ցաղաց քար վանքի վիմագրերում և նրան վերաբերող ձեռագրաց հիշատակարաններում հանդիպում են մոտ երեք տասնյակ հոգևորականների անուններ, որոնց մի մասը վանական միաբանության

առաջնորդներ են: Այս ցուցակների տվյալներից ելնելով փորձել ենք կազմել վանքի առաջնորդների հնարավոր, ժամանակագրական ցանկը, նկատի ունենալով այն անձանց, որոնք հիշատակվում են «առաջնորդ, հայր, տեր» պատվանուններով:

957	Քրիստափոր	1251	տեր Գրիգոր
986	հայր Ստեփանոս	1275	Թաթևոս
1010	Թեոդորոս	1367	տեր Ներսես
1041	հայր Վարդիկ	1460	տեր Ուհանես
1048	Գոռոզ (տեր)	1464	տեր Ռստակես
1055	հայր Պողոս	1483–1492	Գրիգոր եպս.
1222	Գրիգոր	1555	Ստեփանոս եպս.

ՎԵՐՉԱԲԱՆ

Ցաղաց քարի պատմաճարտարապետական և հնագիտական ուսումնասիրությունը սկսվել է 1987 թ. և շարունակվել ևս չորս տարի: Պեղվել է ավելի քան 400 մ² մակերես, բացվել են վանքի Ս.Հովհաննես եկեղեցու հարավային սյունասրահի, արևմտյան գավթի միջանցք-դարպասի և վրայի եկեղեցու, Ս.Աստվածածին եկեղեցու արևելյան մասում գտնվող ուղղանկյուն արսիդով կառույցի ավերակները:

Հայտնաբերվել են նորաբաց կառույցներին վերաբերող բազմաթիվ քանդակագարդ քարեր, որոնք վկայում են այդ շինությունների գեղար-

վեստական հարդարանքի մասին: Ի հայտ են եկել XIII դ. չորս շինարարական բովանդակությամբ արձանագրություններ, որոնք վկայում են տարբեր անձանց կողմից միաբանության կառույցների վերանորոգումների մասին: Հետաքրքրություն է ներկայացնում 1311 թ. Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես Օրբել եպիսկոպոսի արձանագրությունը, որը վերաբերում է պատարագներ սահմանելուն: Նորահայտ արձանագրությունների մեջ գերակշռողը հայտնաբերված հուշակոթողների հիշատակագրային բովանդակությամբ վավերագրերն են, որոնք թեև քննու-

թյան հնարավորություն չեն տալիս, սակայն հետաքրքիր են միաբանության անդամների և վանքի գործունեության տարբեր ոլորտների հետ կապված անձանց ճշգրտելու առումով: Փաստորեն, նորահայտ վավերագրերով գիտական շրջանառության մեջ է դրվում ութ տասնյակից ավելի արձանագրություն: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ խաչքա-

րեր, տապանաքարեր, գերեզմանական այլ կոթողներ:

Խիստ սակավ են նյութական մշակույթի առարկաները: Ուշագրավ է 1988 թ. հայտնաբերված եկեղեցական սպասքը:

Վանական համակառույցի արևմտյան խմբում, հողի ստվար շերտի տակ են գտնվում մի շարք մոնումենտալ կառույցների փլատակներ:

МОНАСТЫРЬ ЦАХАЦ КАР

ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ

ИСТОРИЯ МОНАСТЫРЯ.

Монастырь Цахац кар является одним из крупнейших духовных и культурно-образовательных центров средневековой Армении. На протяжении веков он был одной из епархий митрополитского престола и сыграл огромную роль в духовной жизни провинции.

Монастырский комплекс Цахац кар находится в 6 км к северо-востоку от села Артабуйнк Ехегнадзорского района, на оконечности горной цепи, на высоте 2100 м над уровнем моря. Монастырский комплекс состоит из шести главных церковных сооружений, гавита (притвора), одной большой и двух маленьких колонных галерей, а также ряда монашеских келий. Сам комплекс окружен мощной стеной с прямоугольными башнями.

В течение 1986–1992 гг. были проведены археологические раскопки на западном участке комплекса. В результате раскопок была раскрыта церковь с прямоугольной абсидой, ризница и южная галерея церкви Сурб Ованнес, западная и южная галереи церкви Сурб Аствацацин, сводчатый коридор, на котором построена двухъярусная церковь. Подобные «вратные» коридоры с надстроеными церквями имеются в монастырских комплексах Сюника – Ваанаванке и Татеве.

Обнаружено также большое число хачкаров, перемещенных в Цахац кар на протяжении веков, а также 81 надпись, введенная впервые в научной оборот в настоящей работе.

Во время восстановительных работ, проводимых в последнее время на территории церковью Сурб Карапет (Св.Карапет) и Сурб Ншан (Св.Знамение), было обнаружено еще несколько надписей. Изучение надписей монастыря позволило прийти к заключению, что он был основан в IX в. и функционировал до XVII в. Были найдены также примечательный археологический материал, ук-

рашением которого является коллекция крестов.

Наиболее древние упоминания об этой обители относятся к V в., в связи с освободительным движением против персидских захватчиков. После Аварайрской битвы, в 451 г. армянские военные отряды отступили в наиболее безопасные области страны. По свидетельству историка сюникского феодального дома Степаноса Орбеляна, перед каждым армянским военачальником стояла проблема выбора: изменить христианской вере либо пасть с мечом в руке во имя ее. Один из военных отрядов на пути к отступлению в Арцах в Вайоц дзоре дал четыре сражения против войска преследующего их военачальника Аташхуды.

Ашот I Багратуни после долгой и упорной борьбы становится царем и восстанавливает армянскую государственность, в которую вносит свой вклад также первоприсутствующий князь Сюника Васак. Цахац кар упоминается в XV в., в то время когда страной правил царь Абас Багратуни (929–953 гг.). Согласно свидетельству Степаноса Таронаци, в годы настоятеля монастыря отца Степаноса, Цахац Кар был выдающейся и процветающей монастырской обителью. Мы считаем, что именно настоятелю Степаносу принадлежит памятная стела, помещенная к юго-западу от церкви Сурб Карапет. Надпись на стеле гласит: «В ГОД 986-ой. ОТЕЦ СТЕПАНОС». Согласно новонайденной надписи, отец Степанос умер в 986 г., что близко по времени к эпохе правления Абаса Багратуни. Следовательно, можно идентифицировать этих двух Степаносов, тем более, если учесть данные Степаноса Орбеляна о том, что два церковных сооружения восточного участка Цахац кара были построены «на кладбище первых святых отцов». Отсюда следует, что настоятель монастыря Степанос также был погребен на кладбище первых святых отцов.

Изучение монументальных сооружений монастыря показывает, что из сохранившихся четырех церквей западного комплекса наиболее древними сооружениями являются церкви Сурб Аствацацин (Св. Богородицы) и Сурб Ованнес (Св. Иоанна). Историк армянской архитектуры С.Мнацаканян тщательно изучил вышеописанные памятники Цахац кара и сопоставил их с синхронными архитектурными памятниками Сюника. По его мнению, церковь Сурб Аствацацин занимает достойное место среди религиозных построек комплекса памятников Цахац кара, однако в результате внедрения нескольких «неудачных» деталей в планировочную композицию она «осталась единственным известным примером и не получила дальнейшего развития». Исследователь имеет в виду ризницы церкви и ведущие к ним коридоры. Достойна внимания также композиция церкви Сурб Ованнес, которая выделяется двумя приделами южного участка и расположенной между ними маленькой галереей. Обращаясь к ризницам (приделам), помещенным в сводчатые композиции Сюника, С.Мнацаканян пишет следующее: «Крайне примечательна его (Сурб Ованнеса) планировочная композиция. На южной стороне сводчатой галереи расположены два придела с запада на восток, при этом напротив неширокого, образованного между ними участка, расположен южный вход церкви. Другой вход церкви расположен на западном фасаде церкви». Как показали последующие изыскания, данное сооружение не имело южного входа. Обширный архитектурный комплекс Цахац кара, включающий две церкви, пристроенные в XI в. с южной стороны галереи, а также комплекс зданий в западной стороне Сурб Аствацацин показывает, что IX–XI вв. были одним из периодов расцвета в истории Цахац кара, тем более с учетом того, что в это время были построены церковные сооружения восточной группы памятников.

Следующее историческое сведение о монастыре относится к строительным работам, проводимым в середине XI в. Историк сюникского феодального дома Степанос Орбелян, перечисляя тридцать наиважнейших духовных центров провинции, в ряду семи крупных монастырей Вайоц дзора упоминает Цахац кар как знаменитую оби-

тель, во главе с настоятелем Вардиком, построенную в царствование царя Гагика. Историк упоминает также, что в 1041 г. на этом месте проводились строительные работы под руководством настоятеля Вардика. О строительстве отцом Вардиком двух церквей свидетельствуют две эпитафические надписи. Строительная надпись на притолоке входа гласит: «...Я ОТЕЦ ВАРДИК ПОЛУЧИЛ СУРБ КАРАПЕТ...». Надпись на западной стене Сурб Ншана (Сурб Ованнеса) также свидетельствует: «Я, ОТЕЦ ВАРДИК, ГЛАВА ЕПАРХИИ СВЯТОЙ ОБИТЕЛИ ЦАХАЦ КАР ПОСТРОИЛ СУРБ КАТОГИКЕ (кафедральный собор) И ПОСТАВИЛ СВЯТОЕ ЗНАМЕНИЕ СВЯТОЙ ТРОИЦЫ...».

Вырезанные на стенах группы монастырских построек многочисленные надписи XI–XIV вв. свидетельствуют о расцвете монастыря в указанное время.

Надпись на карнизе южного входа той же церкви гласит: «ГОСПОДИ ПОМИЛУЙ ГАГИКА В ТВОЕ ПРИШЕСТВИЕ И ОТВРАТИ ЗЛО».

В 1331 г. в рукописи, выполненной в Дразарке по заказу Сюникского митрополита Степаноса Тарсаича и скопированной с памятной записи евангелия, писец обращается к персоне заказчика и его владениям. Он характеризует владыку Степаноса как всесильного и мудрого ученого, получившего образование у знаменитого Исаяи Просветителя, сына князя князей, отважного воина Джалала, внука великого атабека Армении и Грузии Тарсаича, владыки Татева, Нораванка и Цахац кара. Фактически, согласно памятной записи, в XIV в. Монастырь Цахац кар наряду с двумя митрополитскими резиденциями Татева и Нораванка, считался одним из первейших, архиерейских престолов Сюникского епархиата.

Начало изучения комплекса памятников относится к середине прошлого века, в то время, когда появились топографические исследования, посвященные различным историческим областям Армении. В ряду различных памятников Вайоц дзора описывается также Цахацкарский комплекс и его надписи. Эти работы, несмотря на некоторые неточности и недочеты, имеют важное значение и роль первоисточника, поскольку часть надписей не сохранилась до наших дней. В этом смыс-

ле важны публикации С.Джалалянца, Д.Бакрад-зе, Качберуни, Г.Алишана, Е.Лалаяна, К.Кучук-Ованнисяна.

